ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2019

02.2019
Փետրվար

03.2019

04.2019

05.2019

06.2019

07.2019

08.2019

09.2019

10.2019

11.2019

12.2019

ՀՀ կենտրոնական բանկի

Թողարկման 26-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2019

Փետրվար

թիվ 2 (246)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԿԱՐԵՆ-5» ԱԿ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի, «ՌԵՋԵՆԹՍ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի, «ՏԵՐ-ԵՍԱՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՍՊԸ–ի գրավատնային գործունեության լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, «ՄԵԼՔՈՆՅԱՆՍ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի գրավատնային գործունեության լիցենզիան կասեցնելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի «Փեթակ» մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու, 3 արտարժույթի փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 14-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 23-ի թիվ 178-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 15-Ն և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ 111-Ն համատեղ որոշումը «Բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների հարկային արգելադրման էլեկտրոնային համակարգի գործողության կարգը և պայմանները հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 106-Ն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի մայիսի 14-ի թիվ 302-Ն համատեղ որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին»

26 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 16-Ն որոշումը «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմի սահմանման և հաշվարկման կարգը» հաստատելու մասին»

30 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 26-Ն որոշումը «2018 -2019 թվականների թողարկման ծրագրով նախատեսված «Գալուստ Գյուլբենկյան-150», «ԵՊՀ հիմնադրման 100-ամյակ», «Վարդան Մախոխյան-150», «Ծովակալ Իսակով-125» «Հայաստանի պատմության թանգարանի 100-ամյակ», «Կոմիտաս-150» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունները հաստատելու մասին»

36 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ԿԱՐԵՆ-5» ԱԿ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 17Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՌԵՋԵՆԹՍ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 19Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՏԵՐ-ԵՍԱՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիան (որոշում թիվ 23Ա):
- ***Կասեցվել է*** «ՄԵԼՔՈՆՅԱՆՍ ԿՈՄՊԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիան (որոշում թիվ 24Ա):
- ***Գրանցվել է*** «ԳԱՌՆԻ ԻՆՎԵՍՏ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության «Փեթակ» մասնաճյուղը (որոշում թիվ 1/90Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 4000000 դրամ գումարի չափով (որոշում 1/57Ա), 3 արտարժույթի փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/57Ա, 1/61Ա, 1/62Ա):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 23-ի թիվ 178-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով սահմանել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկատվական համակարգերում պետական մարմինների նույնականացման նպատակով տրամադրվող համապատասխան կոդերի կառուցվածքը և հստակեցնել այդ կոդերի տրամադրման համար նախատեսված թվերի միջակայքերը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և 2-րդ մասի «ե» ենթակետերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և 2-րդ մասով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի կամ տեղեկատվական համակարգերի մասնակիցների կոդավորման կառուցվածքը, ինչպես նաև հաճախորդների դրամական հաշվեհամարների կառուցվածքը սահմանելու մասին կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 394-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 178-Ն որոշմամբ հաստատված կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կարգի 3-րդ կետի 19-րդ ենթակետում «հիմնադրամ (ֆոնդ)» բառերը փոխարինել «ֆոնդ» բառով,
2) Կարգի 3-րդ կետի 26-րդ ենթակետում «հաշվետվություն ներկայացվող կազմակերպություններ» բառերից հետո լրացնել «կամ պետական մարմիններ,» բառերը,
3) Կարգի 3-րդ կետը 30-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 31-րդ ենթակետով.

   «31) ***Պետական մարմին***՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մարմին»,
4) Կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետից, 22-րդ կետի 1-ին ենթակետից և 28-րդ կետից, ինչպես նաև Կարգի հավելված 2-ի 1-ին ենթակետից հանել «Համահայկական բանկ» բառերը՝ իր հոլովաձևերով,
5) Կարգի 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-կետ.

   «5.1 Կենտրոնական բանկի տեղեկատվական համակարգերին՝ պետական մարմինների անդամակցության դեպքում, Կենտրոնական բանկի կողմից վերջիններիս տրամադրվում է Տեղեկատվական համակարգում մասնակցության կոդ՝ այդ նպատակով սահմանված թվերի միջակայքից: Ընդ որում.

   1) Սույն կոդը Կենտրոնական բանկը տրամադրում է, երբ պետք է ապահովվի տեղեկատվության փոխանցումը՝ տվյալ պետական մարմնի տեղեկատվական շտեմարանի և Կենտրոնական բանկի տեղեկատվական համակարգերի միջև և(կամ) պետք է կատարվի տվյալների փոխանցում ֆինանսական կազմակերպություններին՝ Կենտրոնական բանկի միջնորդությամբ:
   2) Տեղեկատվական համակարգում մասնակցության կոդը կիրառվում է Կենտրոնական բանկի տեղեկատվական համակարգում համապատասխան մասնակցին նույնականացնելու համար:
   3) Տեղեկատվական համակարգում սույն մասնակցության կոդը ունի հետևյալ կառուցվածքը

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. փետրվարի 4-ին (ՀՀՊՏ N5 (641), 01.03.2019):

X1X2X3X4X5		
Որտեղ		
X1X2	Բնութագրում է մասնակցին որպես պետական մարմիններ (երկու նիշ երկարությամբ)	Նիշերի առկայությունը պարտադիր է
X3X4X5	Բնութագրում է տվյալ պետական մարմինը կամ վերջինիս համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը նույնականացնող հերթական համարը (երեք նիշ երկարությամբ)	Նիշերի առկայությունը պարտադիր է

4) Տեղեկատվական համակարգում պետական մարմիններին տրամադրվող մասնակցության կոդը թվերի հաջորդականություն է, որի երկարությունը 5 (հինգ) նիշ է, այն բաղկացած է պարտադիր լրացվող՝ X1X2X3X4X5 նիշերից: Սույն կոդի կառուցվածքում համապատասխան պետական մարմինը (կամ վերջինիս համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը) բնութագրում են X3X4X5-նիշերը, որոնք առանց X1X2-նիշերի չեն կիրառվում:
5) Տեղեկատվական համակարգում մասնակցության կոդը (X1X2X3X4X5-նիշեր) տրամադրվում է համաձայն այդ կոդի տրամադրման մասին Կենտրոնական բանկի նախագահի որոշման:
6) Տրամադրվող կոդը եզակի է և այդ կոդը մասնակցի կողմից ենթակա չէ փոփոխման կամ օտարման:
7) Տրամադրվող կոդը չի կարող կիրառվել վճարային համակարգերում նույնականացման և անդամակցության համար:
8) Տեղեկատվական համակարգում նույնականացման նպատակով յուրաքանչյուր մասնակցի տրամադրվում է մեկ նույնականացման կոդ, կիրառման համար լրացուցիչ երկրորդ կոդը չի տրամադրվում:
9) Տեղեկատվական համակարգում մասնակցության համար տրամադրված կոդը ճանաչվում է անվավեր և դադարեցվում է վերջինիս կիրառումը՝ համաձայն Կենտրոնական բանկի նախագահի որոշման:
10) Տեղեկատվական համակարգին սույն կետով սահմանված անդամակցության գործընթաց նախաձեռնելու համար պետական մարմինը Կենտրոնական բանկ է ներկայացնում համապատասխան գրություն (տեղեկատվական համակարգում մասնակցության և կոդի տրամադրման մասին)՝ միաժամանակ կցելով համապատասխան հիմնավորումները:»,

6) Կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետում «գրանցվում է» բառից հետո լրացնել «(հաշվառվում է)» բառը, իսկ «գրանցման» բառից հետո լրացնել «(հաշվառման)» բառը,
7) Կարգի 22-րդ կետի 8-րդ ենթակետում «վրա» բառից հետո լրացնել «, բացառությամբ նշված միջակայքում 95-ով սկսվող թվերի (ներառյալ՝ 950)» բառերը,
8) Կարգի 22-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 22.1-կետ.

«22.1 Կենտրոնական բանկի Տեղեկատվական համակարգերում պետական մարմինների նույնականացման նպատակով կոդերի տրամադրման համար սահմանվում են հետևյալ թվային միջակայքերը.

Մասնակիցներին համապատասխան կոդերը տրամադրվում են 95001-ից (ներառյալ) մինչև 95999 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար6 95001-ից սկսած, որտեղ պետական մարմիններին նույնականացնող միասնական կոդը (X1X2-նիշերն են) 95 թիվն է, իսկ համապատասխան պետական մարմինը (կամ վերջինիս համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը) նույնականացնող համարը (X3X4X5-նիշերը) տրամադրվում է 001-ից (ներառյալ) մինչև 999 (ներառյալ) թվերի միջակայքում հաջորդաբար:»,

9) Կարգում բոլոր «Արժեթղթավորման հիմնադրամ» և «արժեթղթավորման հիմնադրամ» բառերը՝ դրանց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Արժեթղթավորման ֆոնդ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
7 փետրվարի 2019 թ., N 14-Ն

*Բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների հարկային արգելադրման էլեկտրոնային համակարգի գործողության կարգը և պայմանները հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 106-Ն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի մայիսի 14-ի թիվ 302-Ն համատեղ որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել Հարկային օրենսգրքում կատարված փոփոխությունների կիրառումը՝ հարկային մարմնի կողմից ներկայացված որոշման հիման վրա նշված պարտավորության չափով Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից իրենց հաճախորդների բանկային հաշիվներին միջոցների արգելադրման և արգելանքից հանելու գործընթացը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի օրենքի 433-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 702-L որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն որոշում են.

1. Հաստատել «Բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների հարկային արգելադրման էլեկտրոնային համակարգի գործողության կարգը և պայմանները» (այսուհետ՝ Կարգ)՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների արգելադրման էլեկտրոնային համակարգի գործողության կարգը և պայմանները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի մայիսի 5-ի թիվ 106-Ն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի մայիսի 14-ի թիվ 302-Ն համատեղ որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
7 փետրվարի 2019 թ., N 15-Ն

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դ. Անանյան
19 փետրվարի 2019 թ., N 111-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. փետրվարի 4-ին (ՀՀՊՏ N6 (642), 15.03.2019):

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 15-Ն
և
Հայաստանի Հանրապետության պետական
եկամուտների կոմիտեի նախագահի
2019 թվականի փետրվարի 19-ի թիվ 111-Ն
համատեղ որոշման

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻՆ ԱՌԿԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կարգը սահմանում է էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Հարկային մարմնի պաշտոնատար անձանց կողմից ընդունված արգելադրման որոշումը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերին ուղարկելու, վերջինիս համաձայն բանկերի կողմից սպասարկվող հարկ վճարողի բանկային հաշիվներին առկա և/կամ այդ հաշիվներին մուտքագրվող միջոցների վրա արգելադրում կիրառելու և արդյունքների մասին Հարկային մարմնին տեղեկացնելու, ինչպես նաև Հարկային մարմնի կողմից հաշվարկ իրականացնելու և արդեն կիրառված արգելանքը վերացնելու հետ կապված հարաբերությունները:

ԳԼՈՒԽ 2. ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Ստորև նշված հասկացությունները սույն կարգում օգտագործվում են հետևյալ նշանակությամբ՝

1) ***Բանկ***՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից լիցենզավորված և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկ, ինչպես նաև օտարերկրյա բանկի մասնաճյուղ:
2) ***Հաճախորդ (Հաշվետեր)***՝ Բանկի կողմից սպասարկվող հարկ վճարող, որը ունի տվյալ բանկում բացված բանկային հաշիվ:
3) ***Հարկ վճարող***՝ հարկային օրենսգրքով սահմանված, կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար), որը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ հարկ կամ վճար վճարելու պարտավորություն:
4) ***Հարկային պարտավորություն***՝ Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն:
5) ***Բանկային հաշիվ***՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ բանկային հաշվի պայմանագրի կամ բանկային ավանդի պայմանագրի հիման վրա Բանկում Հաճախորդի համար բացված հաշիվ:
6) ***Հարկային մարմին***՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով և «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մարմին:
7) ***Արգելադրման մասին որոշում***՝ չկատարված հարկային պարտավորությունների հետ կապված, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան Հարկային մարմնի պաշտոնատար անձանց կողմից ընդունված որոշում՝ այդ որոշման մեջ նշված գումարի չափով Հարկ վճարողի բանկային հաշիվներին առկա միջոցների արգելադրման մասին:
8) ***Արգելանքը վերացնելու մասին կարգադրություն***՝ Արգելադրման մասին որոշման համաձայն կիրառված արգելանքը հանելու(վերացնելու)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերն ի հայտ գալու վերաբերյալ Հարկային մարմնի կողմից Բանկին ուղղված տեղեկացում:
9) ***Արգելադրված գումարի նվազեցում***՝ Արգելադրման մասին որոշմամբ սահմանված գումարի չափով դրամական միջոցների փաստացի արգելադրումը ապահովելուց հետո այդ գումարը ամբողջությամբ մեկ բանկում կամ մաս-մաս՝ մի քանի Բանկերում փաստացի արգելադրման մեջ թողնելու պահանջը ապահովելու դեպքում Բանկերում արգելադրված գումարի չափի նվազեցման կատարում:

10) ***Էլեկտրոնային հաղորդագրություն***՝ Կենտրոնական բանկի իրավական ակտերի համաձայն ձևավորված էլեկտրոնային հաղորդագրություն, որը ապահովում է սույն կարգով սահմանված հաղորդագրություններում նշվող համապատասխան տվյալների փոխանցումը: Սույն կարգի 9-րդ գլխում սահմանվում են այդ հաղորդագրություններում լրացման ենթակա նվազագույն տվյալները:
11) ***Հաղորդագրություն***՝ տեխնիկածրագրային միջավայրում տեղեկատվության փոխանցման միավոր: Սույն կարգով սահմանված գործառույթների հետ կապված փոխանցվում են հետևյալ հաղորդագրությունները (որոնց բովանդակության վերաբերյալ պահանջները սահմանված են սույն կարգի 9-րդ գլխում)՝

ա. ***Թիվ 1 հաղորդագրություն***՝ Հարկային մարմնի կողմից փոխանցվող «Արգելադրման որոշման մասին» հաղորդագրություն (կարգադրություն),

բ. ***Թիվ 2 հաղորդագրություն***՝ «Հաստատում Բանկի կողմից Հարկ վճարողի Բանկային հաշվի (հաշիվների) միջոցների վրա արգելանք դնելու մասին» հաղորդագրություն,

գ. ***Թիվ 3 հաղորդագրություն***՝ «Հարկային մարմնի կարգադրության համաձայն բանկերում կիրառվող արգելանքը հանելու կամ կիրառված արգելանքը շարունակելու վերաբերյալ» հաղորդագրություն (կարգադրություն),

դ. ***Թիվ 4 հաղորդագրություն***՝ «Հաստատում Հարկ վճարողի Բանկային հաշվի միջոցների նկատմամբ կիրառված Արգելանքը (մասնակի կամ ամբողջությամբ) հանելու վերաբերյալ» պատասխան հաղորդագրություն,

ե. ***Թիվ 5 հաղորդագրություն***՝ «Արգելանքը հանելու (վերացնելու) մասին» հաղորդագրություն (կարգադրություն),

զ. ***Թիվ 6 հաղորդագրություն***՝ «Հարցում հարկային մարմնին9 Հարկ վճարողի Բանկային հաշվի (Հաշիվների) միջոցները արգելանքից հանելու մասին» հաղորդագրություն,

է. ***Թիվ 7 հաղորդագրություն***՝ «Մերժման մասին» հաղորդագրություն:

12) ***Աշխատանքային օր***՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված աշխատանքային օր:
13) ***Աշխատանքային օրվա ավարտ***՝ սույն կարգի իմաստով՝ Բանկի Գործառնական օրվա ավարտ:
14) ***Գործառնական օր***՝ Աշխատանքային օրվա այն ժամանակահատվածը, որի ընթացքում Բանկն իրականացնում է Հաճախորդների սպասարկման հետ կապված գործառնություններ:
15) ***Համակարգող մարմին***՝ Հարկային մարմինը և Կենտրոնական բանկը, որոնք իրավասու են իրականացնել Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով և սույն կարգով սահմանված գործառույթները:
16) ***Կենտրոնական բանկի միջնորդություն***՝ սույն կարգի իմաստով՝ Կենտրոնական բանկի կողմից համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանցման ապահովումը Բանկերի և Հարկային մարմնի միջև: Կենտրոնական բանկի միջնորդությունը չի կարող նշանակել կամ որևէ կերպ մեկնաբանվել, որ Կենտրոնական բանկի վրա կարող է դրվել սույն ենթակետով չնախատեսված որևէ այլ գործառույթ: Կենտրոնական բանկի միջնորդության հետ կապված՝ Կենտրոնական բանկն իրականացնում է.

ա. Հարկ վճարողի դրամական միջոցների արգելադրման, Արգելադրված գումարի նվազեցման, արգելանքի վերացման գործընթացի հետ կապված սույն կարգով սահմանված համապատասխան հաղորդագրությունների փոխանցումը՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեխնիկածրագրային տիրույթի միջոցով,

բ. Կենտրոնական բանկի կողմից տրամադրված և շահագործվող տեխնիկածրագրային տիրույթի բնականոն աշխատանքի ապահովումը:

17) ***Հաղորդագրությունների փոխանցման ավտոմատացված ծառայություն (service)***՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեխնիկածրագրային տիրույթը, որի միջոցով իրականացվում է սույն կարգով սահմանված տեղեկատվության փոխանակումը Բանկերի և Հարկային մարմնի միջև:
18) ***Էլեկտրոնային համակարգ***՝ կիրառվող տեխնիկածրագրային միջոցների համախմբություն, որը ապահովում է Հարկային մարմնի կողմից Հարկ վճարողի Բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների արգելադրման և կիրառված արգելանքի վերացման հետ կապված գործընթացների իրականացումը:
19) ***Հաշվարկների իրականացման միջավայր (ենթամոդուլ)***՝ Հարկային մարմնի համակարգի միջավայրում ծրագրային միջոցներ, որոնց միջոցով կատարվում է Արգելադրված գումարի նվազեցման հետ կապված համապատասխան հաշվարկների իրականացումը՝ ավտոմատացված եղանակով, և վերջինիս արդյունքում ստացված արդյունքների փոխանցումը Բանկերին:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3. Հարկային մարմնի կողմից ավտոմատացված եղանակով Հաճախորդի բանկային հաշիվներին առկա միջոցների արգելադրումը կամ կիրառված արգելանքի վերացումն իրականացվում է սույն կարգով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն:

4. Յուրաքանչյուր Արգելադրման մասին որոշման պահանջների հետ կապված՝ Հարկային մարմնի կողմից բոլոր Բանկերին ուղարկվում է առանձին թիվ 1 հաղորդագրություն: Վերջինս պարունակում է արգելադրման մասին որոշման հիմնական տվյալները: Հարկային արգելադրման մասին որոշումը սույն հաղորդագրությանը չի կցվում:

5. Այն դեպքում, երբ Բանկին ուղղված թիվ 1 հաղորդագրության մեջ նշված չէ արգելադրման ենթակա գումարը, Բանկը մերժում է այդ հաղորդագրության մեջ նշված պահանջների կատարումը:

6. Բանկը պետք է ապահովի արգելադրման գործընթացի իրականացման հետ կապված Բանկի կողմից ընդունվող հաղորդագրություններում նշվող տեղեկատվության համեմատում և ստուգում Բանկում առկա համապատասխան տվյալների հետ:

7. Բանկը ապահովում է ստացված թիվ 1 հաղորդագրության պահանջներին համապատասխան Հաճախորդի բանկային հաշիվներին առկա միջոցների արգելադրումը:

8. Յուրաքանչյուր Բանկ, թիվ 1 հաղորդագրության համաձայն, իր կողմից սպասարկվող Հարկ վճարողի բանկային հաշիվներին առկա միջոցների արգելադրումն իրականացնում է հետևյալ սկզբունքով.

1) Արգելադրման գործընթացն իրականացվում է Բանկի գործառնական օրվա ընթացքում, թիվ 1 հաղորդագրությունն ընդունելուց անմիջապես հետո,
2) Միջոցների արգելադրումը կատարվում է թիվ 1 հաղորդագրության մեջ նշված գումարի չափով,
3) Հաճախորդի բանկային հաշիվներին միջոցների արգելադրումը կիրառվում է միայն Հաճախորդի հաշիվներին առկա ազատ միջոցների վրա՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կարգով սահմանված հաջորդականության,
4) Եթե Հաճախորդը միևնույն Բանկում ունի մի քանի բանկային հաշիվներ, այդ թվում՝ տարբեր արժույթներով, ապա.

ա. յուրաքանչյուր թիվ 1 հաղորդագրության հետ կապված, Հաճախորդի բանկային հաշիվներին արգելադրվող ընդհանուր գումարը չպետք է գերազանցի արգելադրման ենթակա գումարը, որը նշված է ընդունված թիվ 1 հաղորդագրության մեջ,

բ. առաջին հերթին արգելադրվում են Հաճախորդի՝ Հայաստանի Հանրապետության դրամով ընթացիկ հաշիվներին առկա ազատ միջոցները՝ թիվ 1 հաղորդագրության մեջ նշված հարկային պարտավորության չափով: Այդ հաշիվների վրա դրամական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում, մինչև արգելադրման մասին որոշմամբ նշված հարկային պարտավորության չափով գումարի ապահովումը, ըստ հերթականության արգելադրվում են՝ արտարժույթով ընթացիկ հաշիվները, Հայաստանի Հանրապետության դրամով ավանդային հաշիվները, արտարժույթով ավանդային հաշիվները,

գ. Հաճախորդի արտարժութային հաշիվներին առկա միջոցների արգելադրումը կատարվում է Արգելադրման մասին որոշման ընդունման օրվա դրությամբ, Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով հաշվարկված գումարի չափով: Ընդ որում, մինչև կիրառված արգելադրման վերացումը, արտարժույթի փոխարժեքի տատանման դեպքում Բանկի կողմից ամեն օր արգելադրված գումարի վերահաշվարկ և փոփոխում չի կատարվում: Հաճախորդի կողմից իր արտարժութային հաշվին(հաշիվներում) արգելադրված միջոցների հաշվին հարկային պարտավորությունների վճարման նպատակով Բանկին հանձնարարական ներկայացնելու դեպքում Բանկի կողմից Հաճախորդի արգելադրված արտարժութային միջոցների փոխարկումն իրականացվում է հանձնարարականի կատարման օրվա դրությամբ, Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքով,

դ. Այն դեպքում, երբ Հաճախորդի բանկային հաշիվներին առկա ազատ դրամական միջոցները բացակայում են կամ չեն բավարարում Արգելադրման մասին որոշման մեջ նշված գումարի արգելադրման համար, ապա Բանկը պարտավոր է արգելանք դնել հարկ վճարողի բանկային հաշիվներին հետագայում մուտքագրվող միջոցների վրա՝ մինչև Արգելադրման մասին որոշման մեջ նշված գումարի ապահովումը, եթե չեն ստացվել Արգելադրված գումարի նվազեցման, արգելանքի վերացման հետ կապված համապատասխան հաղորդագրություններ,

ե. Եթե միևնույն Բանկում Հաճախորդն ունի նույն տեսակի մեկից ավելի բանկային հաշիվ, ապա այդ հաշիվներին առկա ազատ դրամական միջոցների արգելադրման հերթականությունը սահմանվում է Բանկի և Հաճախորդի միջև կնքված բանկային հաշվի պայմանագրով: Պայմանագրով արգելադրման հերթականություն սահմանված չլինելու դեպքում արգելանքը՝ արգելադրման մասին որոշ-

մամբ սահմանված գումարի չափով դրվում է հաշիվներից մեկի կամ մի քանիսի վրա, որից հետո Հաճախորդն իրավունք ունի կարգադրել բանկին կատարել փոփոխություն, որի արդյունքում արգելանքից հանվում են Բանկի կողմից արգելադրված դրամական միջոցները (արգելադրված հաշիվը) և արգելանք կիրառել հաճախորդի՝ նույն տեսակի այլ հաշվի միջոցների նկատմամբ և(կամ) նույն տեսակի բոլոր հաշիվների միջոցների նկատմամբ արգելանք կիրառել Հաճախորդի կողմից սահմանված համամասնությամբ: Սույն ենթակետում նշված կարգադրությունը Բանկի կողմից ենթակա չէ կատարման, եթե դրա արդյունքում նույն տեսակի բոլոր հաշիվներում արգելադրված գումարի չափը պակաս կլինի Արգելադրման մասին որոշման մեջ նշված գումարից, որի չափով ի սկզբանե արգելանք է դրվել Բանկի կողմից: Բոլոր այլ դեպքերում սույն ենթակետում նշված կարգադրությունը Բանկի կողմից ենթակա է կատարման այդ կարգադրությունը ստանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն ենթակետի կիրառման նպատակով, նույն տեսակի հաշիվ է համարվում Հայաստանի Հանրապետության դրամով ընթացիկ հաշիվը կամ Հայաստանի Հանրապետության դրամով ավանդային հաշիվը կամ միևնույն արտարժույթով ընթացիկ հաշիվը կամ միևնույն արտարժույթով ավանդային հաշիվը: Սույն կետում նշված կարգադրությունը Հաճախորդը տվյալ Բանկին կարող է ներկայացնել միայն մեկ անգամ:

5) Եթե Հարկ վճարողը տվյալ Բանկում չունի Բանկային հաշիվներ, ապա Հարկային մարմնին տրվում է տեղեկացում, որ նշված Հարկ վճարողը տվյալ Բանկում հաշիվներ չունի: Ընդ որում, եթե թիվ 1 հաղորդագրության ընդունման պահի դրությամբ Հարկ վճարողը տվյալ բանկում չունի բացված բանկային հաշիվներ, սակայն բանկային հաշիվ է բացում հետագայում, ապա թիվ 1 հաղորդագրության մեջ նշված արգելադրման պահանջները տարածվում են հետագայում Հարկ վճարողի կողմից տվյալ բանկում բացված բանկային հաշիվների վրա՝ «Արգելադրման մասին որոշումը» ուժի մեջ լինելու դեպքում, կամ Արգելադրված գումարի նվազեցման հետ կապված համապատասխան հաղորդագրություններ չստանալու դեպքում**:**

6) Բանկը Հարկային մարմնին ուղարկվող հաղորդագրության մեջ նշում է Հարկ վճարողի տարբեր արժույթներով (կամ միևնույն արժույթով) հաշիվներին արգելադրված միջոցներին համարժեք ընդհանուր գումարը՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով:

9. Յուրաքանչյուր Բանկ ընդունված թիվ 1 հաղորդագրության մշակման և իրականացված արգելադրման գործընթացի վերաբերյալ Հարկային մարմնին ուղարկում է համապատասխան պատասխան հաղորդագրություն: Ընդ որում, եթե՝

1) ընդունված թիվ 1 հաղորդագրությունը ձևավորված չէ սահմանված պահանջներին համապատասխան, կամ դրա մեջ առկա են անճշտություններ, ապա Բանկի կողմից ուղարկվում է թիվ 7 հաղորդագրությունը՝ վերջինիս մերժման մասին,

2) ընդունված թիվ 1 հաղորդագրությունը ձևավորված է սահմանված պահանջներին համապատասխան, ապա Բանկը ուղարկում է թիվ 2 պատասխան հաղորդագրությունը, որով հաստատում է Բանկի կողմից թիվ 1 հաղորդագրության մեջ նշված Արգելադրման մասին որոշման կատարումը կամ տեղեկացնում է, որ Հարկ վճարողը չունի Բանկային հաշիվներ:

10. Յուրաքանչյուր Բանկի կողմից Հարկային մարմնին ուղարկվող թիվ 2 հաղորդագրության մեջ պետք է նշվի նաև տեղեկատվություն՝ ընդունված թիվ 1 հաղորդագրության մեջ նշված որոշման դիմաց փաստացի արգելադրված ընդհանուր գումարի չափի մասին:

11. Յուրաքանչյուր Բանկ, սույն կարգով սահմանված հաղորդագրությունը Գործառնական օրվա ընթացքում ընդունելու դեպքում, նույն աշխատանքային օրվա ընթացքում կատարում է այդ հաղորդագրության մեջ նշված կարգադրությունը: Յուրաքանչյուր հաղորդագրության ընդունման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Բանկը ձևավորում և ուղարկում է համապատասխան պատասխան հաղորդագրություն՝ ըստ սույն կարգի 9-րդ գլխում նշված պահանջների:

Ընդ որում, յուրաքանչյուր հաղորդագրության ընդունման (ուղարկման) պահ է համարվում այդ հաղորդագրության ընդունման (ուղարկման) մասին համակարգում ձևավորված էլեկտրոնային գրառումը կատարելու ամսաթիվը, ժամը (ժամը/րոպեն), որի վերաբերյալ կարող է ձևավորվել ներքին հաղորդագրություն:

ԳԼՈՒԽ 4. ԱՐԳԵԼԱԴՐՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻՑ ՀԱՃԱԽՈՐԴԻ (ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ) ԿՈՂՄԻՑ ՆՇՎԱԾ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԲԱՆԿ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

12. Հարկ վճարողը ցանկության դեպքում կարող է նախաձեռնել Հարկային մարմնի որոշման հիման վրա տվյալ բանկում (բանկերում) իրեն պատկանող հաշիվներին արգելադրված միջոցները արգելանքից

հանելու և պարտավորության դիմաց պահանջվող միջոցներն իր ընտրությամբ նշված բանկում արգելադրելու գործընթաց: Ընդ որում.

1) Հարկ վճարողը անմիջապես Հարկային մարմնին ներկայացնում է «Կիրառված հարկային արգելադրումը ապահովող Բանկի (բանկերի) փոխարեն Հարկ վճարողի նշված բանկում արգելադրում իրականացնելու մասին դիմումը» (այսուհետ՝ Արգելադրումը ապահովող բանկը փոփոխելու դիմում):
2) Հարկ վճարողը պետք է նախապես, մինչև «Արգելադրումը ապահովող բանկը փոփոխելու դիմումի» ներկայացումը Հարկային մարմնին, ապահովի Հարկային մարմնի համապատասխան որոշմամբ նշված պարտավորությունից ոչ պակաս գումարով փաստացի ազատ միջոցների առկայությունը իր կողմից ընտրված սպասարկող բանկում, որը կարող է արգելադրվել ըստ հարկային օրենսգրքի:
3) Հարկ վճարողը չի կարող ընտրել մեկից ավելի Բանկեր և նախածեռնել, որ որոշմամբ պահանջվող միջոցների արգելադրումը իրականացվի մաս-մաս՝ տարբեր Բանկերում:

13. Հարկային մարմինը, ոչ ուշ, քան Հարկ վճարողի՝ «Արգելադրումը ապահովող բանկը փոփոխելու դիմումը» ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում, այդ դիմումում նշված բանկին կրկին ուղարկում է «Արգելադրման որոշման մասին» (թիվ 1) հաղորդագրությունը: Այս դեպքում թիվ 1 հաղորդագրության մեջ պետք է առկա լինեն Հարկ վճարողի ներկայացրած դիմումի հետ կապված տվյալներ (որոշման ամսաթիվը, համարը): Ընդ որում.

1) Բանկը, սույն կարգով սահմանված պահանջների համաձայն, մեկ աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է «Արգելադրման որոշման մասին» թիվ 1 հաղորդագրության մշակումը և ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը Հարկային մարմնին ուղարկում է պատասխան հաղորդագրությունը:
2) Թիվ 1 հաղորդագրության մշակման ընթացքում բանկը նաև ստուգում է, որ այդ բանկում Հարկ վճարողին պատկանող հաշիվներին առկա ազատ և(կամ) Հարկային մարմնի՝ արգելադրման մասին նույն որոշման հիման վրա արդեն իսկ արգելադրված միջոցները առնվազն պակաս չլինեն Հարկային մարմնի արգելադրման մասին որոշմամբ նշված պարտավորության գումարից: Եթե ստուգման արդյունքում պարզվում է, որ.

   ա. պահանջվող միջոցները առկա են և սահմանված պահանջը այդ պահին կարող է ապահովվել, ապա Բանկը իրականացնում է նշված որոշմամբ հարկային պարտավորության ամբողջ գումարի արգելադրում և հարկային մարմնին ուղարկում է այդ մասին հաստատումը՝ թիվ 2 հաղորդագրության միջոցով:

   բ. պահանջվող միջոցները բացակայում են կամ անբավարար են, և սահմանված պահանջը այդ պահին չի կարող ապահովվել, ըստ հարկ վճարողի նշված դիմումի, ապա Բանկը չի իրականացնում հաճախորդի դիմումով նշված արգելադրումը և հարկային մարմնին ուղարկում է մերժման մասին թիվ 7 հաղորդագրությունը:

14. Հարկային մարմինը հիմք ընդունելով Բանկից ստացված արգելադրումը կատարելու վերաբերյալ համապատասխան հաստատումը՝ թիվ 2 հաղորդագրությունը, որտեղ առկա է հարկ վճարողի դիմումի հետ կապված տվյալը, իրականացնում է հաշվարկ, որի արդյունքում .

1) երբ պարզվում է, որ Հարկ վճարողի նշված բանկում փաստացի արգելադրվել է տվյալ որոշմամբ նշված պարտավորության գումարը, ապա հարկային մարմինը բավարարում է Հարկ վճարողի դիմումը և մյուս Բանկին (բանկերին) ուղարկվում է համապատասխան թիվ 3 հաղորդագրությունը՝ հանձնարարելով արգելանքից հանել համապատասխան որոշման դիմաց արգելադրված պարտավորության գումարը:
2) երբ պարզվում է, որ Հարկ վճարողի նշված բանկում փաստացի արգելադրված միջոցները պակաս են համապատասխան որոշմամբ նշված պարտավորության գումարից, ապա հարկային մարմինը մերժում է Հարկ վճարողի դիմումի կատարումը և անմիջապես Հարկ վճարողի դիմումով նշված բանկին ուղարկում է համապատասխան թիվ 3 հաղորդագրությունը՝ կրկին հանձնարարելով արգելանքից հանել տվյալ որոշման դիմաց արգելադրված գումարը: Ընդ որում, մյուս Բանկերին հանձնարարություն չի ուղարկվում և վերջիններիս մոտ հարկ վճարողի միջոցների նկատմամբ կիրառված արգելանքը շարունակում է գործել:

15. Հարկային մարմինը չի իրականացնում համապատասխան հաշվարկը և չի բավարարում Հարկ վճարողի դիմումը (Արգելադրումը ապահովող բանկը փոփոխելու մասին) նաև այն դեպքում, եթե Բանկը հարկ վճարողի մեղքով չի կարողացել ապահովել միջոցների փաստացի արգելադրումը համապատասխան արգելադրման որոշմամբ նշված պարտավորության գումարի չափով, որի արդյունքում բանկից ստացել է մերժման մասին հաղորդագրությունը:

ԳԼՈՒԽ 5. ԿԻՐԱՌՎԱԾ ԱՐԳԵԼԱՆՔԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

16. Ընդունված Արգելադրման մասին որոշման հետ կապված Հաճախորդի բանկային հաշիվներին արգելադրված միջոցներից Հաճախորդն իրավունք ունի փոխանցումներ կատարել պետական բյուջե՝ պետական բյուջեի նկատմամբ ունեցած ցանկացած պարտավորության դիմաց, եթե այդ դրամական միջոցները գրավի առարկա չեն: Ընդ որում.

1) Արգելադրված միջոցները կամ դրանց մի մասը Հաճախորդի կարգադրությամբ պետական բյուջեի նկատմամբ ունեցած այլ պարտավորության դիմաց պետական բյուջե փոխանցելու դեպքում այդ արգելադրված միջոցներից պետական բյուջե փոխանցված գումարի չափով Բանկը պետք է իրականացնի Հաճախորդի միջոցների արգելադրում՝ սույն կարգի 8-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված հաջորդականությամբ, որի հետ կապված՝ թիվ 1 հաղորդագրությունը տվյալ Բանկին կրկին չի ուղարկվում,
2) Արգելադրված միջոցները կամ դրանց մի մասը Հաճախորդի կարգադրությամբ պետական բյուջեի նկատմամբ ունեցած այլ պարտավորության դիմաց պետական բյուջե փոխանցելու դեպքում Բանկը Հարկային մարմնին անմիջապես ուղարկում է թիվ 4 հաղորդագրությունը, որտեղ պետք է նշվի Արգելանքի տակ դրված միջոցները կամ դրանց մի մասը այլ պարտավորության դիմաց պետական բյուջե փոխանցելու մասին, ինչպես նաև պետական բյուջե փաստացի փոխանցված գումարի չափը և արժույթը, եթե Բանկը հաճախորդի հանձնարարությամբ այդ փոխանցումը իրականացրել է Հարկային մարմնին թիվ 2 հաղորդագրության ուղարկումից հետո:

17. Բանկը հանում է Հաճախորդի դրամական միջոցների (բանկային հաշիվների) նկատմամբ կիրառված արգելանքը կամ նվազեցնում է արգելադրված գումարը, «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով» Հայաստանի Հանրապետության օրենքով նշված հիմքերի առկայության դեպքում, որոնց վերաբերյալ սույն կարգի համաձայն Բանկին տրվել է թիվ 3 կամ թիվ 5 հաղորդագրությունը:

18. Յուրաքանչյուր Բանկ պարտավոր է վերջինիս գործառնական օրվա ընթացքում արգելանքի վերացման կամ նվազեցման վերաբերյալ հաղորդագրությունը ստանալուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում նվազեցնել կամ արգելանքից հանել արգելադրված գումարը (բանկային հաշիվը): Ընդ որում՝

1) Սույն կետում նշված գործընթացի իրականացման նպատակով Բանկին ուղարկվում է թիվ 3 կամ թիվ 5 հաղորդագրությունը,
2) Բանկը պետք է իրականացնի ընդունված հաղորդագրության մեջ նշված տվյալների, ինչպես նաև Հարկ վճարողի և նշված Արգելադրման մասին որոշման վերաբերյալ Բանկում արդեն առկա տվյալների համապատասխանության ստուգում: Ստուգման արդյունքում.

   ա. նշված տվյալների համապատասխանության դեպքում Բանկը պետք է իրականացնի ընդունված հաղորդագրության մեջ նշված պահանջների կատարում,

   բ. յուրաքանչյուր ընդունված հաղորդագրության կատարման արդյունքում Բանկի կողմից Հարկային մարմնին անմիջապես ուղարկվում է համապատասխան հաստատում՝ թիվ 4 հաղորդագրությունը՝ տեղեկացնելով կատարված գործողության մասին,

   գ. նշված տվյալների անհամապատասխանության դեպքում Բանկը մերժում է ստացված հաղորդագրության կատարումը և հաղորդագրությունը ուղարկողին ուղարկում է թիվ 7 հաղորդագրությունը:

ԳԼՈՒԽ 6. ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ԱՐԳԵԼԱՆՔԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

19. Հարկային մարմինը Հարկային օրենսգրքի համաձայն իրականացնում է հաշվարկ և ապահովում, որ բանկերում հարկ վճարողի բանկային հաշիվներին փաստացի արգելադրված միջոցների հանրագումարը համապատասխանի տվյալ որոշմամբ սահմանված պարտավորության գումարին (այսուհետ՝ Հաշվարկ). Ընդ որում.

1) Հաշվարկի արդյունքում, Արգելանք դնելու մասին համապատասխան որոշմամբ նշված պարտավորության գումարի չափով արգելանքը կարող է դրվել մեկից ավելի Բանկում հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա, սակայն փաստացի արգելադրված միջոցների հանրագումարը չի կարող պակաս լինել կամ գերազանցել տվյալ որոշմամբ նշված պարտավորության չափը:
2) Հարկային մարմինը էլեկտրոնային համակարգում կիրառվող սկզբունքով հաշվարկի իրականացման ժամանակ ընտրում է այն Բանկը (բանկերը) որտեղ պետք է շարունակվեն արգելանքի տակ գտնվել

տվյալ որոշմամբ սահմանված պարտավորության չափով փաստացի արգելադրված միջոցները, որոնք առկա են բանկային հաշվում:

3) Հարկ վճարողը, Հարկային մարմնի հաշվարկի արդյունքում ընտրված Բանկի (բանկերի) հետ կապված առարկություններ ունենալու դեպքում, կարող է Հարկային մարմնին ներկայացնել Արգելադրումը ապահովող բանկերին փոփոխելու մասին դիմում՝ սույն կարգի դրույթների համաձայն:
4) Հարկային մարմինը Հաշվարկն իրականացնում է յուրաքանչյուր անգամ թիվ 2 պատասխան հաղորդագրությունը ստանալիս՝ ոչ ուշ, քան այն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը:
5) Եթե կատարված յուրաքանչյուր հաշվարկի արդյունքներով պարզվում է, որ հարկ վճարողի՝ բանկային հաշիվներում փաստացի արգելադրված ընդհանուր գումարը պակաս չէ արգելանք դնելու մասին տվյալ որոշմամբ նշված պարտավորության չափից, ապա հարկային մարմինը այդ հաշվարկի իրականացման օրվա ընթացքում.

ա. սույն կետում նշված սկզբունքով ընտրում է այն բանկը (բանկերը), որտեղ պետք է շարունակվեն արգելանքի տակ գտնվել տվյալ որոշմամբ սահմանված պարտավորության դիմաց փաստացի արգելադրված միջոցները և այդ մասին տվյալ բանկին (բանկերին) ուղարկում է արգելանքը շարունակելու մասին հանձնարարություն՝ դրա մեջ նշված գումարի չափով:

բ. ձևավորում է և չընտրված բանկին (բանկերին) ուղարկում է հանձնարարություն՝ արգելանքը հանելու կամ նշված չափով արգելադրման գումարը նվազեցնելու մասին: Այդ հանձնարարությունն ուղարկվում է նաև այն բանկերին, որտեղ հարկ վճարողը չունի բանկային հաշիվներ:

6) Հարկային մարմնի հանձնարարությունները՝ կապված արգելադրված գումարի նվազեցման կամ արգելանքի վերացման հետ, ուղարկվում են կիրառելով թիվ 3 կամ թիվ 5 հաղորդագրությունները:
7) Եթե կատարված յուրաքանչյուր հաշվարկի արդյունքներով պարզվում է, որ հարկ վճարողի՝ բանկային հաշիվներում փաստացի արգելադրված ընդհանուր գումարը դեռ պակաս է արգելանք դնելու մասին տվյալ որոշմամբ նշված պարտավորության չափից, ապա հարկային մարմինը արգելանքը հանելու կամ նվազեցնելու հետ կապված հանձնարարություն բանկերին չի ուղարկում:
8) Հարկային մարմինը, Բանկերից ստացված հաղորդագրություններում սխալների առկայության դեպքում, ուղարկում է մերժման մասին հաղորդագրություն՝ նշելով պատճառը (ըստ անհրաժեշտության կարող են կիրառվել համապատասխան կոդեր):

20. Բանկը՝ վերջինիս գործառնական օրվա ընթացքում հարկային մարմնից նշված հանձնարարությունը ստանալուց հետո՝ անմիջապես, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, պարտավոր է հիմք ընդունելով հաղորդագրությամբ սահմանված պահանջը՝ հանել արգելանքը կամ նշված չափով նվազեցնել տվյալ որոշման դիմաց արգելադրվող պարտավորության գումարը: Բանկը, ստացված հանձնարարության կատարումից հետո, ի պատասխան, կատարման արդյունքների մասին համապատասխան տեղեկատվություն է ներկայացնում հարկային մարմնին՝ ուղարկելով թիվ 4 հաղորդագրությունը:

21. Բանկը Հարկային մարմնից մերժման մասին հաղորդագրությունը ստանալու դեպքում պետք է իրականացնի սխալների ճշգրտում, սահմանված կարգով ձևավորի համապատասխան հաղորդագրությունը և ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը կրկին ուղարկի Հարկային մարմնին: Այդ թվում.

1) Եթե Բանկից ստացված թիվ 2 հաղորդագրության համաձայն տվյալ բանկում հաճախորդի հաշիվներին փաստացի արգելադրված դրամական միջոցները գերազանցում են այդ բանկին ուղարկված Արգելադրման մասին որոշմամբ սահմանված գումարը, ապա Հարկային մարմինը մերժում է ստացված թիվ 2 հաղորդագրությունը:
2) Արգելադրման գործընթացի հետ կապված, Հարկային մարմնի կողմից ուղարկված հաղորդագրությունները Բանկի կողմից կատարվում են առանց լրացուցիչ հաստատում պահանջելու և ստանալու: Եթե համապատասխան հաղորդագրությունը Բանկին ուղարկվել է ոչ Հարկային մարմնի կողմից, ապա այն ենթակա չէ կատարման:

ԳԼՈՒԽ 7. ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԿԻՐԱՌՎԱԾ ԱՐԳԵԼԱՆՔԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՀԱՆՋԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

22. Արգելադրման մասին որոշմամբ նշված հարկային պարտավորությունների գումարի փաստացի վճարումը հաստատող վճարային փաստաթղթերը Հարկ վճարողի կողմից Բանկին ներկայացվելու դեպքում՝ արգելանքը վերացնելու մասին Հաճախորդի պահանջը Բանկի կողմից մշակվում և կատարվում է սույն գլխով սահմանված ընթացակարգով, այդ մասին Հարկային մարմնից լրացուցիչ հաստատում պահանջելու միջոցով:

23. Եթե Հաճախորդի Բանկային հաշիվներին առկա դրամական միջոցների վրա կիրառված արգելադրումը դեռ չի վերացվել, քանի որ սահմանված ժամկետում Հարկային մարմնի կողմից այդ մասին

համապատասխան հաղորդագրություն դեռ չի ուղարկվել, ապա Հաճախորդն իրավունք ունի պահանջել իր Բանկից վերացնել կիրառված արգելանքը: Այդ նպատակով Հաճախորդը պետք է համապատասխան Բանկին ներկայացնի «Կիրառված արգելանքը վերացնելու մասին» դիմում, որը լրացվում և ներկայացվում է սույն կարգի հավելված 1-ում նշված օրինակելի ձևին համապատասխան: Հարկ վճարողի Դիմումին կից ներկայացվում են նաև արգելանքի վերացման համար հիմք հանդիսացող՝ սույն կարգի 28-րդ կետում նշված փաստաթղթերը: Ընդ որում.

1) Հաճախորդը «Կիրառված արգելանքը վերացնելու մասին» դիմումը բանկին ներկայացնում է
   ա. թղթային եղանակով, կամ
   բ. էլեկտրոնային եղանակով՝ Բանկի կողմից հաճախորդների սպասարկման նպատակով կիրառվող համակարգի միջոցով, ապահովելով սույն կարգի պահանջները:
2) «Կիրառված արգելանքը վերացնելու մասին» Հաճախորդի դիմումը թղթային կամ էլեկտրոնային եղանակով Բանկին ներկայացվում և ընդունվում է հետևյալ պահանջների համաձայն.
   ա. Հաճախորդի դիմումը ներկայացվում է մինչև վերջինիս ընդունման համար Բանկի գործառնական օրվա ժամանակացույցով սահմանված ժամը:
   բ. Հաճախորդը սույն կետում նշված դիմումը թղթային եղանակով իրեն սպասարկող Բանկ է ներկայացնում երկու օրինակից, որոնք պետք է ստորագրված և կնքված լինեն (կնիքի առկայության դեպքում) Հաճախորդի կողմից:
   գ. Ներկայացված թղթային դիմումի բոլոր օրինակների տվյալները պետք է լինեն միևնույնը, լրացված լինեն առանց ջնջումների, պետք է բավարարեն և համապատասխանեն վերջինիս նկատմամբ սույն կետում սահմանված պահանջներին: Եթե դիմումը լրացվել և ներկայացվել է ջնջումներով կամ չի բավարարում սահմանված պահանջներին, այն մերժվում է և չի ընդունվում:
   դ. Թղթային եղանակով Հաճախորդից ընդունված դիմումի բոլոր օրինակների վրա Բանկի կողմից նշվում է ստացման ամսաթիվը, ժամը (ժամ/րոպե) և վավերացվում ստացողի ստորագրությամբ: Թղթային եղանակով ներկայացված դիմումի մեկ օրինակը մնում է Բանկի մոտ, իսկ մյուսը ստորագրված և կնքված վերադարձվում է Հաճախորդին:
   ե. Եթե Հաճախորդը իր դիմումը Բանկ է ներկայացնում վերջինիս ընդունման համար գործառնական օրվա ժամանակացույցով սահմանված ժամից հետո, ապա այն համարվում է Հաճախորդից ընդունված հաջորդ աշխատանքային օրը, տվյալ Բանկի գործառնական օրվա բացման պահին:
3) «Կիրառված արգելանքը վերացնելու մասին» Հաճախորդի դիմումի ընդունման պահ է համարվում.
   ա. Թղթային եղանակով ներկայացման դեպքում՝ այդ դիմումի վրա նշված ընդունման ամսաթիվը, ժամը/րոպեն,
   բ. էլեկտրոնային եղանակով ներկայացման դեպքում՝ այդ մասին Բանկի համակարգում էլեկտրոնային գրառման կամ դիմումը ընդունելու վերաբերյալ էլեկտրոնային հաղորդագրության մեջ նշված ամսաթիվը, ժամը/րոպեն:

24. «Կիրառված արգելանքը վերացնելու մասին» դիմումին կից Հաճախորդի կողմից պարտադիր պետք է ներկայացվեն Կիրառված արգելանքը վերացնելու համար Հարկային օրենսգրքի 432 հոդվածի 2-րդ մասի համաձայն հիմք հանդիսացող հետևյալ փաստաթղթերի պատճենները (իսկ էլեկտրոնային դիմումին կարող են կցվել դրանց տեսաներածված (սկանավորված) տարբերակները).

1) Արգելադրման մասին որոշման մեջ նշված Հարկային պարտավորության կատարման հետ կապված փաստացի վճարում կատարելու վերաբերյալ համապատասխան անդորրագիրը, կամ
2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվել է պարտավորության գումարի գանձումը, և ներկայացվում է համապատասխան հավաստող փաստաթուղթը, կամ
3) Հարկային մարմնի ղեկավարի կողմից հրապարակված՝ հարկային պարտավորությունների ապահովման՝ գույքի արգելանքի միջոցը հարկային պարտավորությունների ապահովման այլ միջոցներով փոխարինելու վերաբերյալ համապատասխան հանձնարարագիրը և արգելանքը հարկային պարտավորության ապահովման այլ միջոցով փոխարինելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթը:

25. «Կիրառված արգելանքը վերացնելու մասին» դիմումը և վերջինիս հետ կից ներկայացվող փաստաթղթերը ընդունելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդին սպասարկող Բանկը արգելանքը վերացնելու վերաբերյալ համապատասխան թիվ 6 հաղորդագրությունն է ուղարկում Հարկային մարմնին: Ընդ որում, հարկ վճարողի կողմից բանկին ներկայացված՝ հիմք հանդիսացող փաստաթղթերը որևէ ձևաչափով չեն կցվում բանկի կողմից Հարկային մարմնին ուղարկվող թիվ 6 հաղորդագրությանը:

26. Եթե Բանկը հաղորդագրությունը ուղարկելու պահից (եթե առկա է համակարգի կողմից տրված ուղարկման/ստացման հաստատումը) մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հարկային մարմնից չի

ստանում մերժման վերաբերյալ թիվ 7 հաղորդագրությունը, ապա Բանկը պարտավոր է սույն կետում նշված ժամկետի գործառնական օրվա ավարտին հանել տվյալ Արգելադրման մասին որոշման հետ կապված, Հաճախորդի արգելադրված միջոցների (այդ թվում՝ արգելադրված հաշիվների) նկատմամբ կիրառված արգելանքը: Կիրառված արգելանքը վերացնելու դեպքում Բանկը Հարկային մարմին ուղարկում է թիվ 4 հաղորդագրությունը:

ԳԼՈՒԽ 8. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

27. Արգելադրման գործընթացի կիրառման և արգելանքի վերացման հետ կապված՝ Հարկային մարմնի և Բանկերի (այսուհետ՝ Կողմեր) միջև, ինչպես նաև Կենտրոնական բանկին տեղեկատվության փոխանցումը կատարվում է.

1) էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով, որոնք ձևավորվում են համաձայն դրանց կիրառման համար Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջների:
2) էլեկտրոնային հաղորդագրությունները փոխանցվում են Կենտրոնական բանկի միջնորդությամբ:

28. Էլեկտրոնային եղանակով Հաղորդագրությունների փոխանցումը կատարվում է.

1) Կենտրոնական բանկի Սի-Բի-էյ-Նեթ (CBANet) միջբանկային համակարգչային ցանցի միջոցով:
2) Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում այդ էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանցումը կատարվում է Կենտրոնական բանկի հետ համաձայնեցված եղանակով:
3) Հարկային մարմնի և Բանկերի միջև յուրաքանչյուր էլեկտրոնային հաղորդագրության փոխանցման և ընդունման ժամանակ ստացող կողմը ձևավորում և տրամադրում է այդ հաղորդագրությունների ընդունումը հաստատող ներքին համակարգային հաղորդագրություն:
4) Հարկային մարմինը և Բանկերը, համապատասխանաբար իրենց աշխատանքային (գործառնական) օրվա ընթացքում՝ ոչ ուշ, քան 10 րոպե հաճախականությամբ, ինչպես նաև աշխատանքային (գործառնական) օրվա վերջում ստուգում են՝ Կենտրոնական բանկի տրամադրած տեխնիկածրագրային տիրույթի միջոցով, իրենց ուղղված (փոխանցված) հաղորդագրությունների առկայությունը և ապահովում դրանց ընդունումը, մշակումը:

29. Հարկային մարմնի կողմից փոխանցվում են հետևյալ հաղորդագրությունները:

1) «Արգելադրման որոշման մասին» թիվ 1 հաղորդագրությունը (կարգադրություն),
2) «Հարկային մարմնի կարգադրության համաձայն բանկերում կիրառվող արգելանքը հանելու կամ կիրառված արգելանքը շարունակելու վերաբերյալ» թիվ 3 հաղորդագրությունը (կարգադրություն),
3) Հարկային մարմնի կողմից անհրաժեշտության դեպքում կարող են կիրառվել նաև հետևյալ հաղորդագրությունները.
   ա. «Արգելանքը հանելու (վերացնելու) մասին» թիվ 5 հաղորդագրությունը (կարգադրություն),
   բ. «Մերժման մասին» թիվ 7 հաղորդագրությունը:

30. Բանկերի կողմից փոխանցվում են հետևյալ հաղորդագրությունները.

1) «Հաստատում Բանկի կողմից Հարկ վճարողի Բանկային հաշվի (հաշիվների) միջոցների վրա արգելանք դնելու մասին» թիվ 2 հաղորդագրությունը,
2) «Հաստատում Հարկ վճարողի Բանկային հաշվի միջոցների նկատմամբ կիրառված Արգելանքը (մասնակի կամ ամբողջությամբ) հանելու վերաբերյալ» թիվ 4 հաղորդագրությունը,
3) «Հարցում հարկային մարմնին՝ Հարկ վճարողի Բանկային հաշվի (Հաշիվների) միջոցները Արգելանքից հանելու մասին» թիվ 6 հաղորդագրությունը,
4) «Մերժման մասին» թիվ 7 հաղորդագրությունը:

31. Յուրաքանչյուր Բանկ և Հարկային մարմինը իրականացնում են իրենց կողմից փոխանցված և ստացված Հաղորդագրությունների և դրանցում առկա տեղեկատվության պահպանումը նվազագույնը 5 տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 9. ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՎԱԾ ԱՐԳԵԼԱՆՔԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

32. «Արգելադրման որոշման մասին» թիվ 1 հաղորդագրությունը պարունակում է Բանկերին ուղղված կարգադրություն՝ Հարկ վճարողի բանկային հաշվին նշված գումարի չափով արգելադրում կիրառելու մասին, որը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

1) Հաղորդագրության բացառիկ համարը,
2) Հաղորդագրության ուղարկման ամսաթիվը, ժամը (ժամ, րոպե),

3) Հղման համարը, որտեղ ըստ առկայության նշվում է.
   ա. այն հաղորդագրության բացառիկ համարը, որին ի պատասխան ուղարկվում է սույն հաղորդագրությունը, և (կամ)
   բ. տրվում է հղում՝ ուղարկող կողմի համակարգում ձևավորված այն փաստաթղթին, որը կապված է սույն ուղարկվող հաղորդագրության տվյալների հետ:
4) Հաղորդագրությունը ձևավորող և ուղարկող կողմը.
   ա. Ուղարկողի անվանումը (ըստ առկայության),
   բ. Ուղարկողի կոդը,
5) Հաղորդագրությունը ստացող (հասցեատեր) կողմը.
   ա. Ստացող բանկի անվանումը (ըստ առկայության),
   բ. Ստացող բանկի կոդը,
6) Արգելադրման մասին որոշման ամսաթիվը,
7) Արգելադրման մասին որոշման բացառիկ համարը (և ըստ անհրաժեշտության՝ նշում է նաև հերթական եզակի համարը՝ կապված նույն որոշումը կրկին ուղարկելու հետ),
8) Արգելադրման ենթակա գումարը և արժույթը՝ ըստ նշված Արգելադրման մասին որոշման,
9) Հարկ վճարողի (Հաճախորդի) անվանումը (անուն, ազգանունը),
10) Հարկ վճարողի (Հաճախորդի) հաշվառման համարը (ՀՎՀՀ),
11) Կատարման ենթակա գործառնության նպատակը (ըստ անհրաժեշտության՝ համապատասխան կոդի կիրառում),
   ա. ապահովել որոշմամբ նշված պարտավորության գումարի արգելադրումը օրենսդրությամբ սահմանված կարգով-1 կոդը.
   բ. պահանջվում է որոշմամբ նշված ամբողջ պարտավորության գումարը արգելադրել ձեր բանկում, ըստ հարկ վճարողի դիմումի -9 կոդը,
12) Արգելադրման որոշում ընդունող անձի անուն ազգանունը, պաշտոնը,
13) Արգելադրման որոշման ընդունման հիմքի մասին տեղեկատվություն (ըստ առկայության),
14) Վայրը (ըստ անհրաժեշտության՝ համապատասխան կոդի կիրառում):
15) Հարկ վճարողի ցանկությամբ տվյալ բանկում արգելանքը կիրառելու մասին Հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված դիմումի բացառիկ համարը և վերջինիս ամսաթիվը (ըստ առկայության, երբ ներկայացվել է այդ դիմումը):

33. «Հաստատում Բանկի կողմից Հարկ վճարողի Բանկային հաշվի (հաշիվների) միջոցների վրա արգելանք դնելու մասին» թիվ 2 հաղորդագրությունը պարունակում է տեղեկացում՝ նշված Հարկ վճարողի միջոցների նկատմամբ Բանկի կողմից արգելադրում կատարելու մասին, որը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

1) Հաղորդագրության բացառիկ համարը,
2) Հաղորդագրության ուղարկման ամսաթիվը, ժամը (ժամ, րոպե),
3) Հղման համարը, որտեղ ըստ առկայության նշվում է.
   ա. այն հաղորդագրության բացառիկ համարը, որին ի պատասխան ուղարկվում է սույն հաղորդագրությունը, և(կամ)
   բ. տրվում է հղում՝ ուղարկող կողմի համակարգում ձևավորված այն փաստաթղթին, որը կապված է սույն ուղարկվող հաղորդագրության տվյալների հետ,
4) Հաղորդագրությունը ձևավորող և ուղարկող կողմը.
   ա. Ուղարկող բանկի անվանումը (ըստ առկայության),
   բ. Ուղարկող բանկի կոդը,
5) Հաղորդագրությունը ստացող (հասցեատեր) կողմը.
   ա. Ստացողի անվանումը (ըստ առկայության),
   բ. Ստացողի կոդը,
6) Արգելադրման մասին որոշման ամսաթիվը,
7) Արգելադրման մասին որոշման բացառիկ համարը,
8) Արգելադրման ենթակա գումարը և արժույթը՝ ըստ նշված Արգելադրման մասին որոշման (պահանջվող գումարի չափը),
9) Հարկ վճարողի (Հաճախորդի) անվանումը (անուն, ազգանունը),
10) Հարկ վճարողի (Հաճախորդի) հաշվառման համարը (ՀՎՀՀ):
11) Կատարված գործողության արդյունքը (նկարագրությունը՝ կոդի տեսքով).
   ա. արգելադրումը կատարված է նշված փաստացի գումարով - 8 կոդը (նշվում է նաև այդ պահին տվյալ որոշման դիմաց բանկում փաստացի Արգելադրված միջոցների ընդհանուր գումարը),
   բ. Տվյալ ՀՎՀՀ-ով հարկ վճարողը բանկում հաշիվներ չունի - 2 կոդը,

12) Փաստացի Արգելադրված ընդհանուր գումարի չափը և արժույթը (որը նշվում է բանկում հաճախորդի սպասարկման դեպքում),
13) Հարկ վճարողի ցանկությամբ տվյալ բանկում արգելանքը կիրառելու մասին Հարկ վճարողի կողմից հարկային մարմին ներկայացված դիմումի բացառիկ համարը և վերջինիս ամսաթիվը (ըստ առկայության, երբ առկա է թիվ 1 հաղորդագրության մեջ):

34. «Հարկային մարմնի կարգադրության համաձայն բանկերում կիրառվող արգելանքը հանելու կամ կիրառված արգելանքը շարունակելու վերաբերյալ» թիվ 3 հաղորդագրությունը պարունակում է Բանկերին ուղղված կարգադրություն՝ կիրառված արգելանքը շարունակելու և (կամ) կիրառված արգելադրումը նշված գումարի չափով նվազեցնելու (վերացնելու) մասին, որը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

1) Հաղորդագրության բացառիկ համարը,
2) Հաղորդագրության ուղարկման ամսաթիվը, ժամը (ժամ, րոպե),
3) Հղման համարը, որտեղ (ըստ առկայության) նշվում է.
   ա. այն հաղորդագրության բացառիկ համարը, որին ի պատասխան ուղարկվում է սույն հաղորդագրությունը, և(կամ)
   բ. տրվում է հղում՝ ուղարկող կողմի համակարգում ձևավորված այն փաստաթղթին, որը կապված է սույն ուղարկվող հաղորդագրության տվյալների հետ:
4) Հաղորդագրությունը ձևավորող և ուղարկող կողմը.
   ա. Ուղարկողի անվանումը (ըստ առկայության),
   բ. Ուղարկողի կոդը,
5) Հաղորդագրությունը ստացող (հասցեատեր) կողմը.
   ա. Ստացող բանկի անվանումը (ըստ առկայության),
   բ. Ստացող բանկի կոդը,
6) Արգելադրման մասին որոշման բացառիկ համարը,
7) Արգելադրման մասին որոշման ամսաթիվը,
8) Արգելադրման ենթակա գումարը և արժույթը՝ ըստ նշված Արգելադրման մասին որոշման (պահանջվող գումարի չափը),
9) Տվյալ բանկում Արգելանքի տակ փաստացի պահվող գումարը և արժույթը (որի չափով արգելանքը շարունակվում է),
10) Այլ բանկերում Արգելանքի տակ փաստացի պահվող միջոցների հանրագումարը և արժույթը,
11) Արգելանքից հանվող գումարը և արժույթը (արգելադրման որոշմամբ նշված գումարի նվազեցման չափը՝ կապված այլ բանկերում փաստացի արգելադրված միջոցների հետ),
12) Հարկ վճարողի (Հաճախորդի) անվանումը (անուն, ազգանունը),
13) Հարկ վճարողի (Հաճախորդի) հաշվառման համարը (ՀՎՀՀ),
14) Բանկերին ուղղված կարգադրություն (ըստ անհրաժեշտության կարող է կիրառվել համապատասխան կոդ).
   ա. հարկ վճարողի բանկային հաշվին կիրառված արգելադրումը նշված գումարի չափով նվազեցնելու (վերացնելու) մասին և (կամ)
   բ. տվյալ բանկում կիրառված արգելանքը շարունակելու մասին, որի դեպքում Արգելադրող բանկը պարտավոր է շարունակել արգելանքի տակ պահել նշված գումարը:

35. «Հաստատում՝ Հարկ վճարողի Բանկային հաշվի միջոցների նկատմամբ կիրառված Արգելանքը (մասնակի կամ ամբողջությամբ) հանելու վերաբերյալ» թիվ 4 հաղորդագրությունը կիրառվում է Բանկի կողմից Հարկային մարմնին տեղեկացում կատարելու նպատակով, նաև այն դեպքում, երբ հարկ վճարողի հաշիվներին արգելանքի տակ դրված միջոցները (մասնակի կամ ամբողջությամբ) փոխանցվել են պետական բյուջե հարկ վճարողի այլ պարտավորության դիմաց, ընդ որում՝ թիվ 4 հաղորդագրությունը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

1) Հաղորդագրության բացառիկ համարը,
2) Հաղորդագրության ուղարկման ամսաթիվը, ժամը (ժամ, րոպե),
3) Հղման համարը, որտեղ ըստ առկայության նշվում է.
   ա. այն հաղորդագրության բացառիկ համարը, որին ի պատասխան ուղարկվում է սույն հաղորդագրությունը, և(կամ)
   բ. տրվում է հղում՝ ուղարկող կողմի համակարգում ձևավորված այն փաստաթղթին, որը կապված է սույն ուղարկվող հաղորդագրության տվյալների հետ:
4) Հաղորդագրությունը ձևավորող և ուղարկող կողմը.
   ա. Ուղարկող բանկի անվանումը (ըստ առկայության),
   բ. Ուղարկող բանկի կոդը,

5) Հաղորդագրությունը ստացող (հասցեատեր) կողմը.
   ա. Ստացողի անվանումը (ըստ առկայության),
   բ. Ստացողի կոդը,
6) Արգելադրման մասին որոշման բացառիկ համարը,
7) Արգելադրման մասին որոշման ամսաթիվը,
8) Հարկ վճարողի (Հաճախորդի) անվանումը (անուն, ազգանունը),
9) Հարկ վճարողի (Հաճախորդի) հաշվառման համարը (ՀՎՀՀ),
10) Կատարված գործողության արդյունքը (նկարագրությունը, ըստ անհրաժեշտության կարող է կիրառվել համապատասխան կոդը).
   ա. Գործողությունը կատարված է – 4 կոդը,
   բ. Տվյալ հարկ վճարողը (ՀՎՀՀ-ն) բանկում հաշիվներ չունի – 2 կոդը,
   գ. Արգելանքի տակ դրված միջոցները բացակայում են - 5 կոդը,
   դ. Արգելանքի տակ դրված միջոցները փոխանցվել են պետական բյուջե այլ պարտավորության դիմաց - 7 կոդը: Այս դեպքում բանկի կողմից նշվում են նաև պետական բյուջե փաստացի փոխանցված գումարի չափը և արժույթը:
11) Արգելանքի տակ դրված միջոցներից պետական բյուջե փաստացի փոխանցված գումարի չափը և արժույթը:

36. «Արգելանքը հանելու (վերացնելու) մասին» թիվ 5 հաղորդագրությունը պարունակում է կարգադրություն, ուղղված Բանկերին, հարկ վճարողի հաշիվներն արգելադրված միջոցների վրա դրված արգելանքը հանելու (վերացնելու) մասին, որը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.
1) Հաղորդագրության բացառիկ համարը,
2) Հաղորդագրության ուղարկման ամսաթիվը, ժամը (ժամ, րոպե),
3) Հղման համարը, որտեղ ըստ առկայության նշվում է.
   ա. այն հաղորդագրության բացառիկ համարը, որին ի պատասխան ուղարկվում է սույն հաղորդագրությունը, և/կամ
   բ. տրվում է հղում՝ ուղարկող կողմի համակարգում ձևավորված այն փաստաթղթին, որը կապված է սույն ուղարկվող հաղորդագրության տվյալների հետ,
4) Հաղորդագրությունը ձևավորող և ուղարկող կողմը.
   ա. Ուղարկողի անվանումը (ըստ առկայության),
   բ. Ուղարկողի կոդը,
5) Հաղորդագրությունը ստացող (հասցեատեր) կողմը.
   ա. Ստացող բանկի անվանումը (ըստ առկայության),
   բ. Ստացող բանկի կոդը,
6) Արգելադրման մասին որոշման ամսաթիվը,
7) Արգելադրման մասին որոշման բացառիկ համարը,
8) Արգելադրման որոշմամբ նշված գումարը և արժույթը (որոշմամբ պահանջվող գումարի չափը),
9) Հարկ վճարողի (Հաճախորդի) անվանումը (անուն, ազգանունը),
10) Հարկ վճարողի (Հաճախորդի) հաշվառման համարը (ՀՎՀՀ),
11) Արգելանքը հանելու (վերացնելու) հետ կապված հիմքի մասին համապատասխան նշում (ըստ անհրաժեշտության կարող են կիրառվել նաև համապատասխան կոդեր):

37. «Հարցում հարկային մարմնին Հարկ վճարողի՝ Բանկային հաշվի (Հաշիվների) միջոցները Արգելանքից հանելու մասին» թիվ 6 հաղորդագրությունը պարունակում է տեղեկացում ուղղված Հարկային մարմնին, այն մասին, որ տվյալ Արգելադրման որոշման հետ կապված Հաճախորդի համապատասխան բանկային հաշվի (հաշիվների) վրա առկա միջոցները դեռ արգելադրված են, սակայն հաճախորդը ներկայացրել է իր պարտավորությունները օրենքով սահմանված կարգով կատարելու մասին հիմքեր, և որ անհրաժեշտ է մերժել կամ հաստատել արգելանքից հանելու Հաճախորդի պահանջը: Թիվ 6 հաղորդագրությունը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.
1) Հաղորդագրության բացառիկ համարը,
2) Հաղորդագրության ուղարկման ամսաթիվը, ժամը (ժամ, րոպե),
3) Հղման համարը, որտեղ (ըստ առկայության) նշվում է.
   ա. այն հաղորդագրության բացառիկ համարը, որին ի պատասխան ուղարկվում է սույն հաղորդագրությունը, և(կամ)
   բ. տրվում է հղում ուղարկող կողմի համակարգում ձևավորված այն փաստաթղթին, որը կապված է սույն ուղարկվող հաղորդագրության տվյալների հետ,

4) Հաղորդագրությունը ձևավորող և ուղարկող կողմը.
   ա. Ուղարկող բանկի անվանումը (ըստ առկայության),
   բ. Ուղարկող բանկի կոդը,
5) Հաղորդագրությունը ստացող (հասցեատեր) կողմը.
   ա. Ստացողի անվանումը (ըստ առկայության),
   բ. Ստացողի կոդը,
6) Արգելադրման մասին որոշման ամսաթիվը,
7) Արգելադրման մասին որոշման բացառիկ համարը,
8) Հարկ վճարողի (Հաճախորդի) անվանումը (անուն, ազգանունը),
9) Հարկ վճարողի (Հաճախորդի) հաշվառման համարը (ՀՎՀՀ),
10) Արգելանքը հանելու (վերացնելու) հետ կապված հիմքի մասին համապատասխան նշում (այդ թվում՝ այդ փաստաթղթերի տվյալները),
11) Կատարված գործողության արդյունքը (նկարագրությունը, ըստ անհրաժեշտության կարող է կիրառվել համապատասխան կոդ).
   ա. Անհրաժեշտ է մերժել կամ հաստատել արգելանքից հանելու պահանջը - 6 կոդը:

38. «Մերժման մասին» թիվ 7 հաղորդագրությունը պարունակում է տեղեկացում այն մասին, որ տվյալ Արգելադրման որոշման հետ կապված համապատասխան Հարկ վճարողի միջոցների արգելադրման գործընթացի վերաբերյալ ստացված հաղորդագրությունը մերժվել է, և պահանջվում է կատարել ճշգրտում: Թիվ 7 հաղորդագրությունը պետք է ներառի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.
1) Հաղորդագրության բացառիկ համարը,
2) Հաղորդագրության ուղարկման ամսաթիվը, ժամը (ժամ, րոպե),
3) Հղման համարը, որտեղ ըստ առկայության նշվում է.
   ա. այն հաղորդագրության բացառիկ համարը, որին ի պատասխան ուղարկվում է սույն հաղորդագրությունը, և(կամ)
   բ. տրվում է հղում ուղարկող կողմի համակարգում ձևավորված այն փաստաթղթին, որը կապված է սույն ուղարկվող հաղորդագրության տվյալների հետ,
4) Հաղորդագրությունը ձևավորող և ուղարկող կողմը.
   ա. Ուղարկողի (այդ թվում՝ բանկ) անվանումը (ըստ առկայության),
   բ. Ուղարկողի (այդ թվում՝ բանկ) կոդը,
5) Հաղորդագրությունը ստացող (հասցեատեր) կողմը.
   ա. Ստացողի (այդ թվում՝ բանկ) անվանումը (ըստ առկայության),
   բ. Ստացողի (այդ թվում՝ բանկ) կոդը,
6) Արգելադրման մասին որոշման ամսաթիվը,
7) Արգելադրման մասին որոշման բացառիկ համարը,
8) Հարկ վճարողի (Հաճախորդի) անվանումը (անուն, ազգանունը),
9) Հարկ վճարողի (Հաճախորդի) հաշվառման համարը (ՀՎՀՀ),
10) Կատարված գործողության արդյունքը (նկարագրությունը, ըստ անհրաժեշտության կարող են կիրառվել համապատասխան կոդեր).
   ա. Հրահանգի կատարումը մերժվել է (-3 կոդ) հետևյալ պատճառներով (կամ դրանցից որևէ մեկով).
   ա1. գումարը նշված չէ,
   ա2. ՀՎՀՀ-ն չի համապատասխանում Կազմակերպության անվանմանը,
   ա3. նշված որոշման համարով Հարկային մարմնից կարգադրություն չի ստացվել,
   ա4. հարկ վճարողի դիմումով նշված որոշման դիմաց պահանջվող արգելադրումը չի կատարվել,
   ա5. այլ չդասակարգված պատճառ:

39. Արգելադրումների գործընթացի ավտոմատացման հետ կապված սույն կարգի համաձայն ուղարկվող հաղորդագրությունների փոխկապվածությունը նշված է սույն կարգի Հավելված 2-ում:

40. Սույն կարգով նշված հաղորդագրություններին համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների դաշտերը, դրանց տեխնիկաբրագրային նկարագրությունը և լրացման կանոնները սահմանվում են Կենտրոնական բանկի կողմից: Ընդ որում, սույն կարգով սահմանված նվազագույն տեղեկատվությունից բացի, էլեկտրոնային հաղորդագրությունները կարող են պարունակել նաև այլ տվյալներ, եթե դրանց համար Կենտրոնական բանկի կողմից սահմանված են համապատասխան դաշտեր: Սույն կարգով նշված որոշ հաղորդագրությունների համար կարող է կիրառվել միևնույն էլեկտրոնային հաղորդագրությունը, եթե էլեկտրոնային հաղորդագրությունների կիրառման կանոններով սահմանվել են այդ դեպքերը:

41. Սույն կարգով էլեկտրոնային հաղորդագրություններին տրված համարները պայմանական են և չեն վերաբերում տեխնիկածրագրային միջավայրում այդ էլեկտրոնային հաղորդագրությունների կիրառման համար սահմանվող կոդերին:

42. Սույն կարգով սահմանված գործընթացների ապահովման նպատակով յուրաքանչյուր հաղորդագրության կիրառման ժամանակ, հաղորդագրություն ուղարկողին պետք է տրամադրվի հաստատում ձևավորված հաղորդագրությունը ստացողին փաստացի հասանելի լինելու մասին:

ԳԼՈՒԽ 10. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

43. Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեխնիկածրագրային միջավայրով կամ սույն կարգի 46-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Կենտրոնական բանկի համար Սի-Բի-էյ-Նեթ ցանցում գրանցված հատուկ փոստային արկղին՝ Հարկային մարմնի և (կամ) Առևտրային բանկերի կողմից արգելադրման գործընթացի հետ կապված փոխանցված բոլոր Հաղորդագրությունները և դրանցում նշված ամբողջ տեղեկատվությունը կարող է գրանցվել և պահպանվել Կենտրոնական բանկի կողմից, այդ նպատակով վարվող հատուկ տվյալների պահոցում (այսուհետ՝ սև արկղ): Ընդ որում՝

1) էլեկտրոնային համակարգի միջոցով փոխանցվող հաղորդագրությունները, ինչպես նաև Սի-Բի-էյ-Նեթ համակարգչային ցանցի միջոցով փոխանցվող հաղորդագրությունները պահպանվում են համապատասխանաբար դրանցից յուրաքանչյուրի համար կիրառվող «սև արկղերում»:
2) «Սև արկղերում» պահպանվում է միայն Կենտրոնական բանկին տրամադրած կամ վերջինիս ուղարկած Հաղորդագրություններում առկա տեղեկատվությունը:
3) «Սև արկղերում» գրանցված տեղեկատվությունը Կենտրոնական բանկի կողմից արխիվացվում և պահպանվում է նվազագույնը 5 տարի ժամկետով:

44. Կենտրոնական բանկի կողմից «սև արկղերում» պահպանված տեղեկատվությունը կարող է տրամադրվել Հարկային մարմնին և (կամ) Բանկերին, եթե այդ տեղեկությունն անհրաժեշտ է Հարկային մարմնի և (կամ) Բանկերի միջև առաջացած վեճերի հետ կապված որպես ապացույց ներկայացնելու համար:

45. «Սև արկղերից» տվյալների ստացման և կիրառման նպատակով համապատասխան Բանկը կամ Հարկային մարմինը Կենտրոնական բանկ են ներկայացնում դիմում, որտեղ պետք է նշվեն.

1) Դիմող կողմի (Բանկ կամ Հարկային մարմին) անվանումը, տվյալները,
2) «Սև արկղերից» տվյալների ստացման պատճառը,
3) Հարկային արգելադրման մասին որոշման համարը,
4) Հարկ վճարողի անվանումը և ՀՎՀՀ-ը,
5) Այն ժամանակահատվածը (ամսաթիվը, ժամը), որի ընթացքում փոխանցվել են տվյալ որոշման հետ կապված հաղորդագրությունները, և անհրաժեշտ է իրականացնել վերջիններիս որոնումը:

46. Յուրաքանչյուր Բանկ և Հարկային մարմինը կարող է ստանալ միայն իր կողմից ստացված և իր կողմից ուղարկված Հաղորդագրություններում պարունակվող տվյալների վերաբերյալ տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 11. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

47. Մինչև էլեկտրոնային համակարգի և Հաշվարկների իրականացման միջավայրի ներդրումը, Հարկային մարմնի, Կենտրոնական բանկի և Բանկերի միջև Հաղորդագրությունների փոխանցումը կատարվում է Սի-Բի-էյ-Նեթ ցանցում գրանցված հատուկ փոստային արկղի (հասցեի) միջոցով: Ընդ որում.

1) Հարկային մարմնի և Բանկերի կողմից միմյանց ուղարկվող Հաղորդագրությունների կրկնօրինակը պարտադիր ուղարկվում է նաև Կենտրոնական բանկին՝ վերջինիս համար Սի-Բի-էյ-Նեթ ցանցում գրանցված հատուկ փոստային արկղին:
2) Մինչև Հաշվարկների իրականացման միջավայրի ներդրումը, սույն կարգի համաձայն արգելադրման գործընթացի հետ կապված հաշվարկների իրականացման նպատակով՝ սույն կարգով սահմանված հաղորդագրությունները Հարկային մարմնի և Բանկերի միջև չեն փոխանցվում: Կողմերը միմյանց փոխանցում են հաղորդագրությունների դաշտերին համապատասխան տվյալները, սույն կետում նշված եղանակով:
3) Սի-Բի-էյ-Նեթ ցանցով ուղարկվող հաղորդագրություններում նշվող տեղեկատվությունը պետք է բավարարի սույն Կարգով Հաղորդագրությունների համար սահմանված պահանջներին:
4) Արգելադրման գործընթացի հետ կապված սույն Կարգով սահմանված գործառնությունների իրականացման վերաբերյալ հաղորդագրությունները թղթային եղանակով ներկայացման դեպքում պետք է

պարունակեն սույն Կարգի 9-րդ գլխով նշված՝ համապատասխան հաղորդագրության համար սահմանված նվազագույն տեղեկատվությունը:

48. Հարկային մարմինը և յուրաքանչյուր բանկ Կենտրոնական բանկ է ներկայացնում համապատասխան դիմում՝ նշելով Սի-Բի-էյ-Նեթ ցանցում 46-րդ կետի փոստային արկղի (հասցե) բացման հետ կապված տվյալները: Սույն կետում նշված փոստային արկղի միջոցով պետք է իրականացվի միայն սույն կարգով սահմանված հաղորդագրությունների ուղարկումը և ստացումը:

49. Հարկային մարմնի, Բանկի տարածքային ստորաբաժանումների կողմից Հաղորդագրությունների ուղարկումը և ստացումը կատարվում է համապատասխանաբար Հարկային մարմնի և յուրաքանչյուր Բանկի գլխամասային գրասենյակի համար (ըստ սույն կարգի 46-րդ կետի) բացված փոստային արկղի (հասցեի) միջոցով:

Հավելված 1
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 15-Ն
և
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի
2019 թվականի փետրվարի 19-ի թիվ 111-Ն
համատեղ որոշման Հավելվածի

Կիրառված արգելադրումը վերացնելու մասին հաճախորդի դիմում

Բանկի անվանումը _____

Ներկայացման ամսաթիվը «_____»_____20____թ.

Հաճախորդի անուն ազգանուն (անվանումը) _____,

Հաճախորդի անձնագրային տվյալներ (ՀԿՀՀ) _____,

Սույնով խնդրում եմ

1. Հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից ընդունված Արգելադրման որոշման համաձայն՝ բանկի կողմից արգելադրված միջոցների վրա կիրառված արգելադրումը վերացնել՝ հիմք ընդունելով այդ գործընթացի համար օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը (որոնք պարտադիր պետք է կցվեն սույն դիմումին):

1.1 Արգելադրման մասին որոշման համարը՝ թիվ _____ և ամսաթիվը _____.

1.2 Նշված Արգելադրման որոշման հետ կապված Հաճախորդի բանկային հաշիվներին արգելադրված ընդհանուր գումարը կազմում է.

գումարը _____ (ՀՀ դրամ)

2. Թվարկել կից ներկայացող փաստաթղթերի տեսակները.

ա. _____

բ. _____

գ. _____

դ. _____

3. Միաժամանակ տեղեկացված եմ, որ ՀՀ օրենսդրության համաձայն՝ Բանկը պետք է սույն դիմումով նշված պահանջը կատարի Հարկային մարմին համապատասխան հարցում ուղարկելուց և պատասխան ստանալուց հետո: Որի հետ կապված՝ Հարկային մարմինը սահմանված ժամկետում կարող է մերժել սույն դիմումով նշված պահանջի կատարումը:

Հաճախորդի (իրավաբանական անձի տնօրենի, լիազոր անձի) ստորագրությունը _____,
կնիքը (դրվում է առկայության դեպքում)

Բանկի աշխատակցի ստորագրությունը և ընդունման ամսաթիվը

_____, «___» _____ 20__թ.

դրոշմակնիքը (դրվում է առկայության դեպքում)

Հավելված 2
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 15-Ն
և
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի
2019 թվականի փետրվարի 19-ի թիվ 111-Ն
համատեղ որոշման Հավելվածի

Սույն կարգով սահմանված Արգելադրումների գործընթացի ավտոմատացման հետ կապված կողմերի միջև ուղարկվող հաղորդագրությունների փոխկապվածությունը

Թիվ 1 հաղորդագրություն

1. Ուղարկող՝ Հարկային մարմին
2. Հասցեատեր՝ Առևտրային Բանկ
3. Ուղարկվում է.
   1) հարկային մարմնի որոշումը՝ բոլոր բանկերին
   2) որոշումը Կոնկրետ բանկին՝ հաճախորդից ընդունված դիմումի համաձայն որոշման արգելադրումը այդ բանկում իրականացնելու նպատակով

Թիվ 2 հաղորդագրություն

1. Ուղարկող՝ Առևտրային Բանկ
2. Հասցեատեր՝ Հարկային մարմին
3. Ուղարկվում է ի պատասխան թիվ 1 հաղորդագրության (տվյալ պահին փաստացի արգելադրված գումարի/հարկ վճարողի մասին)

Վերջինիս ամփոփման և հաստատման արդյունքում հարկային մարմինը բանկին ուղարկում է թիվ 3 հաղորդագրությունը:

Թիվ 3 հաղորդագրություն

1. Ուղարկող՝ Հարկային մարմին
2. Հասցեատեր՝ Առևտրային Բանկ
3. Ուղարկվում է թիվ 2 հաղորդագրությունների ամփոփման արդյունքում

Թիվ 4 հաղորդագրություն

1. Ուղարկող՝ Առևտրային Բանկ
2. Հասցեատեր՝ Հարկային մարմին
3. Ուղարկվում է.
   1) ի պատասխան թիվ 3 հաղորդագրության
   2) ի պատասխան թիվ 5 հաղորդագրության,
   3) ըստ կարգի՝ արգելադրված միջոցները այլ պարտավորության դիմաց փոխանցելու դեպքում

Թիվ 5 հաղորդագրություն

1. Ուղարկող՝ Հարկային մարմին
2. Հասցեատեր՝ Առևտրային Բանկ
3. Ուղարկվում է Արգելանքից հանելու դեպքերը տեղի ունենալու դեպքում՝
   1) պարտավորության վճարում,
   2) ժամանակացույցի կնքում,
   3) Դատարանի որոշմամբ Հարկ վճարողի պահանջի բավարարում,
   4) Արգելադրման որոշման կասեցում,
   5) Հարկային օրենսգրքով սահմանված այլ դեպքերում:
4. Այս հաղորդագրությունը նաև ուղարկվում է ի պատասխան թիվ 6 հաղորդագրության:

Թիվ 6 հաղորդագրություն

1. Ուղարկող՝ Առևտրային Բանկ
2. Հասցեատեր՝ Հարկային մարմին
3. Ուղարկվում է հաճախորդի դիմումի համաձայն

Թիվ 7 հաղորդագրություն

1. Ուղարկող՝ Առևտրային Բանկ կամ Հարկային մարմին
2. Հասցեատեր՝ Հարկային մարմին (կամ Առևտրային Բանկ)
3. Ուղարկվում է՝
   1) ի պատասխան թիվ 2, 4 կամ 6 հաղորդագրության՝ Հարկային մարմնի կողմից, եթե ստացված հաղորդագրության մեջ առկա է սխալ:
   2) ի պատասխան թիվ 1, 3 կամ 5 հաղորդագրության՝ առևտրային բանկի կողմից, եթե ստացված հաղորդագրության մեջ առկա է սխալ:

*«Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմի սահմանման և հաշվարկման կարգը» հաստատելու մասին**

Նպատակ ունենալով նպաստել բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, բարձրացնել Կենտրոնական բանկի կողմից մակրոպրուդենցիալ գործիքների կիրառման արդյունավետությունը և համապատասխանեցնել կապիտալի պահանջը միջազգային ստանդարտներով սահմանված պահանջներին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 4.1-րդ մասը, 37.1-րդ հոդվածի 3-րդ կետը, 44-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերը և 54.1-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «ժթ» կետերով և 36-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգը»՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
7 փետրվարի 2019 թ., N 16-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. փետրվարի 4-ին (ՀՀՊՏ N5 (641), 01.03.2019):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԻ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԻՑ ԲԱՐՁՐ ՇԵՄԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

Գլուխ 1. Կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր սահմանված շեմերը և դրանց մեծությունները

1. Կենտրոնական բանկը բանկերի համար սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 2) սահմանված կապիտալի համարժեքության նորմատիվների նվազագույն սահմանային հարաբերակցություններից բարձր հետևյալ շեմերը.

1) Կապիտալի պահպանման շեմ,
2) Կապիտալի հակացիկլիկ շեմ,
3) Համակարգայնության շեմ:

2. Սույն կարգում օգտագործվող հասկացությունները համապատասխանում են Կանոնակարգ 2-ում օգտագործվող հասկացություններին:

3. Կապիտալի պահպանման շեմը սահմանվում է.

1) 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ)՝ 0.5 տոկոսի չափով,
2) 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ)՝ 1 տոկոսի չափով,
3) 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ)՝ 1.5 տոկոսի չափով,
4) 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ)՝ 2 տոկոսի չափով,
5) 2024 թվականի հունվարի 1-ից սկսած՝ 2.5 տոկոսի չափով:

4. Կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանվում է համաձայն սույն կարգի 2-րդ գլխի:

5. Համակարգայնության շեմը սահմանվում է համաձայն սույն կարգի 3-րդ գլխի:

6. Կապիտալի պահպանման շեմը և կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանվում են բոլոր բանկերի համար, իսկ համակարգայնության շեմը սահմանվում է համակարգային նշանակություն ունեցող բանկերի համար՝ համաձայն սույն կարգի 3-րդ գլխի:

7. Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվների նվազագույն սահմանային հարաբերակցություններից բարձր համախմբված շեմը (այսուհետ՝ համախմբված շեմ) որոշվում է որպես կապիտալի պահպանման շեմի և կապիտալի հակացիկլիկ շեմի, իսկ համակարգային նշանակություն ունեցող բանկերի համար՝ նաև համակարգայնության շեմի հանրագումար:

8. Բանկը բավարարում է համախմբված շեմի պահանջին, եթե ստորև նշված տարբերություններից յուրաքանչյուրը մեծ կամ հավասար է համախմբված շեմից.

1) (Հիմնական կապիտալ՝ առանց արտոնյալ բաժնետոմսերի/ՌԿԱ)X100% - Նվազագույն սահմանաչափ 1,
2) (Հիմնական կապիտալ/ՌԿԱ)X100%- Նվազագույն սահմանաչափ 2,
3) (Ընդհանուր կապիտալ/ՌԿԱ)X100% - 12%,

որտեղ՝ «Հիմնական կապիտալ՝ առանց արտոնյալ բաժնետոմսերի» տարրը՝ Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետի 1-ին ենթակետի «ա»-«գ» պարբերություններում նշված տարրերի հանրագումարի և 28.1-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն կատարվող պակասեցումների տարբերությունն է:

9. Սույն կարգի 8-րդ կետում նշված Նվազագույն սահմանաչափ 1-ը և Նվազագույն սահմանաչափ 2-ը որոշվում են հետևյալ աղյուսակի համաձայն՝

Տարի	Նվազագույն սահմանաչափ 1	Նվազագույն սահմանաչափ 2
01/01/2019-31/12/2019	(100/13)%	(120/13)%
01/01/2020 և հետագայում	(100/12)%	10%

10. Համախմբված շեմի՝ սույն կարգի 8-րդ կետում նշված հաշվարկն իրականացվում է ամսվա միջին օրական հաշվարկով՝ Կանոնակարգ 2-ով սահմանված պահանջներին համապատասխան:

Գլուխ 2. Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանումը

11. Կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանվում է 0 տոկոսից (ներառյալ) մինչև 2.5 տոկոս (ներառյալ) միջակայքում, ընդ որում՝ նվազագույն քայլի մեծությունը կազմում է 0.25 տոկոս, և կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանվում է սույն կետում նշված նվազագույն քայլի բազմապատիկի չափով:

12. Կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ սահմանում է կապիտալի հակացիկլիկ շեմը և ոչ ուշ, քան տվյալ եռամսյակին հաջորդող առաջին ամսվա վերջին աշխատանքային օրը հրապարակում է առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

1) տվյալ եռամսյակի համար հաշվարկված կապիտալի հակացիկլիկ շեմի մեծությունը,
2) վարկ/ՀՆԱ հարաբերակցությունը և դրա շեղումը իր պատմական տրենդից,
3) տվյալ եռամսյակի կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած հիմնավորումը,
4) կապիտալի հակացիկլիկ շեմի փոփոխման դեպքում (աճ, նվազում)՝ դրա ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

13. Կենտրոնական բանկն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը:

14. Կապիտալի հակացիկլիկ շեմը Կենտրոնական բանկի կողմից առաջին անգամ 0 տոկոսից բարձր սահմանվելու կամ գործող շեմից բարձր շեմ սահմանելու դեպքում, այն ուժի մեջ է մտնում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում, բայց ոչ պակաս, քան նշված շեմի հրապարակման օրվան հաջորդող 6-ամսյա ժամկետը: Կապիտալի հակացիկլիկ շեմը Կենտրոնական բանկի կողմից գործող շեմից ցածր շեմ սահմանելու դեպքում, այդ թվում՝ 0 տոկոս շեմ սահմանելու դեպքում, այն ուժի մեջ է մտնում Կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետում:

Գլուխ 3. Համակարգայնության շեմի սահմանումը

15. Համակարգայնության շեմը սահմանվում է.

1) 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ)՝ 0.5 տոկոսի չափով,
2) 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ)՝ 1 տոկոսի չափով,
3) 2023 թվականի հունվարի 1-ից սկսած՝ 1.5 տոկոսի չափով:

16. Յուրաքանչյուր տարի Կենտրոնական բանկը՝ Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշմամբ հաստատում է այն բանկերի ցանկը, որոնք համարվում են համակարգային նշանակություն ունեցող և մինչև տվյալ տարվա հունիսի 30-ը առանձին գրությամբ ծանուցում է սույն կետում նշված ցանկում ընդգրկված բանկերին: Մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ը Կենտրոնական բանկը առանձին գրությամբ ծանուցում է նաև այն բանկերին, որոնք տվյալ տարում դադարել են համարվել համակարգային նշանակություն ունեցող:

17. Այն բանկերի համար, որոնք սույն կարգի 16-րդ կետի համաձայն Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ առաջին անգամ համարվել են համակարգային նշանակություն ունեցող, կամ որոնք նախորդ տարվա ընթացքում չեն համարվել համակարգային նշանակություն ունեցող, սակայն տվյալ տարում համարվել են համակարգային նշանակություն ունեցող, սույն կարգի 15-րդ կետով սահմանված համակարգայնության շեմն ուժի մեջ է մտնում սույն կարգի 16-րդ կետում նշված ծանուցման օրվան հաջորդող տարվա հունվարի 1-ից: Այն բանկերի համար, որոնք նախորդ տարվա ընթացքում համարվել են համակարգային նշանակություն ունեցող, սակայն տվյալ տարում չեն համարվել համակարգային նշանակություն ունեցող Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, համակարգայնության շեմը չի կիրառվում սույն կարգի 16-րդ կետում նշված ծանուցման օրվան հաջորդող ամսվա 1-ից:

Գլուխ 4. Համախմբված շեմով սահմանվող սահմանափակումները

18. Բանկին արգելվում է սույն կետի 1-3 ենթակետերով սահմանված վճարումներ (մարումներ) կատարել, եթե դրանց վճարման (մարման) օրվան նախորդող երեք ամիսների ընթացքում բանկն առնվազն մեկ անգամ խախտել է տվյալ բանկի համար սահմանված համախմբված շեմը, կամ եթե դրանց վճարումը (մարումը) կհանգեցնի համախմբված շեմի խախտմանը.

1) բանկի սովորական և արտոնյալ բաժնետոմսերի գծով միջանկյալ և տարեկան շահութաբաժինների բաշխում,
2) բանկի մասնակիցներին որևէ այլ ձևով եկամուտների կամ հատուցումների հայեցողական վճարումները, եթե դրանք հանգեցնում են բանկի ընդհանուր կապիտալի նվազեցմանը, այդ թվում՝ մասնակցության հետգնման միջոցով,
3) բանկի ղեկավարներին պարգևատրումների և այլ խրախուսական վճարումների (հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ և այլն) վճարումը:

Սույն կետում օգտագործվող «բանկի ղեկավար» հասկացությունը համապատասխանում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում օգտագործվող հասկացությանը:

19. Այն դեպքում, երբ բանկը խախտել է տվյալ բանկի համար սահմանված համախմբված շեմը, բանկն այդ խախտման օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանում (այսուհետ՝ ՖՎՊՍ) պետք է ներկայացնի կապիտալի պլան, որը պետք է առնվազն ներառի բանկի կանխատեսումը առաջիկա մեկ տարվա ընթացքում բանկի հաշվեկշռի, եկամուտների ու ծախսերի և կապիտալի համարժեքության նորմատիվների վերաբերյալ, ինչպես նաև տվյալ բանկի համար սահմանված համախմբված շեմը բավարարելու նպատակով կապիտալի համարժեքության բարձրացմանն ուղղված՝ բանկի կողմից նախատեսվող քայլերը (միջոցառումները)՝ հստակ ժամանակացույցով: Սույն կետի իմաստով համախմբված շեմի խախտման օր է համարվում Կենտրոնական բանկի կողմից սահմանված համապատասխան հաշվետվության ներկայացման ամսաթիվը, որով արձանագրվել է համախմբված շեմի խախտումը:

20. ՖՎՊՍ-ն կարող է բացասական եզրակացություն տալ բանկի կողմից ներկայացված կապիտալի պլանին, եթե ողջամիտ չեն բանկի կողմից ներկայացված կանխատեսումները, կապիտալի համարժեքության բարձրացմանն ուղղված բանկի կողմից նախատեսվող քայլերը (միջոցառումները) և/կամ համախմբված շեմը բավարարելու բանկի կողմից նշված ժամկետները:

21. Բանկի կողմից ներկայացված կապիտալի պլանի վերաբերյալ ՖՎՊՍ կողմից բացասական եզրակացություն տալու դեպքում՝

1) ՖՎՊՍ-ն կարող է առևտրային բանկից պահանջել՝ փոփոխել կապիտալի պլանը և ՖՎՊՍ կողմից նշված ժամկետում, սակայն ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել վերանայված կապիտալի պլանը՝ ըստ ՖՎՊՍ կողմից ներկայացված առաջարկների, և (կամ)
2) Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ տվյալ բանկի համար կարող է սահմանվել կապիտալի համարժեքության ավելի խիստ նորմատիվ (նորմատիվներ): Ընդ որում՝ բանկի նկատմամբ կապիտալի համարժեքության ավելի խիստ նորմատիվ (նորմատիվներ) կարող է սահմանվել նաև այն դեպքում, երբ բանկը սույն կարգի 19-րդ կետով կամ սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետում ՖՎՊՍ չի ներկայացրել համապատասխան կապիտալի պլանը կամ չի գործել Կենտրոնական բանկ ներկայացված կապիտալի պլանին համապատասխան:

22. Սույն կարգի 20-րդ կետով սահմանված կապիտալի պլանը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ՖՎՊՍ կողմից բանկին եզրակացություն չտալու դեպքում կապիտալի պլանի վերաբերյալ ՖՎՊՍ դրական եզրակացությունը համարվում է տրված:

23. Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ որևէ բանկի նկատմամբ սահմանվում է կապիտալի համարժեքության ավելի խիստ նորմատիվ, տվյալ բանկի համար համախմբված շեմը նվազեցվում է տվյալ բանկի համար սահմանված կապիտալի համարժեքության ավելի խիստ նորմատիվի սահմանաչափի և Կանոնակարգ 2-ով սահմանված կապիտալի համարժեքության նվազագույն սահմանաչափի տարբերության չափով (բայց ոչ ավելի, քան տվյալ բանկի համախմբված շեմը), եթե Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ այլ բան սահմանված չէ:

*2018 -2019 թվականների թողարկման ծրագրով նախատեսված «Գալուստ Գյուլբենկյան-150», «ԵՊՀ հիմնադրման 100-ամյակ», «Վարդան Մախոխյան-150», «Ծովակալ Իսակով-125» «Հայաստանի պատմության թանգարանի 100-ամյակ», «Կոմիտաս-150» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունները հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի «է» կետը, 40-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2019 թվականի մարտի 22-ից շրջանառության մեջ դնել «Գալուստ Գյուլբենկյան-150» ոսկե հուշադրամը:

2. 2019 թվականի մայիսի 16-ից շրջանառության մեջ դնել «ԵՊՀ հիմնադրման 100-ամյակ» արծաթե հուշադրամը:

3. 2019 թվականի մայիսի 31-ից շրջանառության մեջ դնել «Վարդան Մախոխյան-150» արծաթե հուշադրամը:

4. 2019 թվականի օգոստոսի 22-ից շրջանառության մեջ դնել «Ծովակալ Իսակով-125» արծաթե հուշադրամը:

5. 2019 թվականի սեպտեմբերի 19-ից շրջանառության մեջ դնել «Հայաստանի պատմության թանգարանի 100-ամյակ» արծաթե հուշադրամը:

6. 2019 թվականի սեպտեմբերի 26-ից շրջանառության մեջ դնել «Կոմիտաս-150» արծաթե հուշադրամը:

7. Հաստատել սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են սույն որոշման հավելվածում (կցվում է):

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
28 փետրվարի 2019 թ., N 26-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. փետրվարի 27-ին (ՀՀՊՏ N 6(642), 15.03.2019):

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2019 թվականի փետրվարի 27-ի
թիվ 26-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Գալուստ Գյուլբենկյան-150» ոսկե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է հայ բարերարի հավաքական կերպարը խորհրդանշող հուշակոթողը («Հայ բարերարների ճեմուղի» հուշահամալիր) և «ԵՐԱԽՏԱՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ» երկլեզու մակագրությունը: Ներքևի մասում թողարկման տարեթիվն է՝ «2019» և անվանական արժեքը՝ «10000 ԴՐԱՄ», շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին Գ. Գյուլբենկյանի դիմանկարն է և նրա ստորագրությունը: Աջ մասում բարերարի ծննդյան և մահվան տարեթվերն են՝ «1869-1955», շրջագծով «ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ» և «GALOUSTE GULBENKIAN» մակագրություններն են:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	10000 դրամ
Մետաղը/հարգը	ոսկի 900^0
Տրամագիծը	22,0 մմ
Քաշը	8,6 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	1000 հատ

Էսքիզների հեղինակներն են Հարություն Սամուելյանը (դիմերես) և Վարդան Վարդանյանը (դարձերես):
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Գալուստ Գյուլբենկյան-150» ոսկե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՊՀ հիմնադրման 100-ամյակ» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է հայ գիտնականներին նվիրված հուշակոթողի հատված (գտնվում է Երևանի պետական համալսարանում): Ձախից և աջից «SCIENTIA POTENTIA EST» և «1000 ԴՐԱՄ» ուղղահայաց մակագրություններն են: Ներքևի մասում թողարկման տարեթիվն է՝ «2019» և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունը:

Հուշադրամի դարձերեսին «Սահակ Պարթև, Մեսրոպ Մաշտոց» խմբաքանդակն է ԵՊՀ շենքի ուրվագծի և գերբի ֆոնին: Մակագրություններն են՝ «100», «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» և «YEREVAN STATE UNIVERSITY»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Տրամագիծը	40,0 մմ
Քաշը	33,6 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ

էսքիզների հեղինակներն են Հարություն Սամուելյանը (դիմերես) և Վարդան Վարդանյանը (դարձերես): Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«ԵՊՀ հիմնադրման 100-ամյակ» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Վարդան Մախոխյան-150» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Վ. Մախոխյանի «Կապրի կղզու ափերը» կտավից դրվագ: Ձախ վերին մասում ՀՀ զինանշանն է, ստորին մասում՝ անվանական արժեքը՝ «100 ԴՐԱՄ»: Ստորին եզրագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է և թողարկման տարեթիվը՝ «2019»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Վ. Մախոխյանի դիմանկարը և նկարչի «Անհանգիստ ծովը. Ափ» կտավից դրվագ: Մակագրություններն են՝ «ՎԱՐԴԱՆ ՄԱԽՈԽՅԱՆ», «VARTAN MAHOKIAN» և «150 ամյակ»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Տրամագիծը	28,0 ճ 40,0 մմ
Քաշը	28,28 գ
Որակը	լավացված
Դրամաշուրթը	հարթ
Քանակը	500 հատ

էսքիզների հեղինակն է Լուսինե Լալայանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Վարդան Մախոխյան-150» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ծովակալ Իսակով-125» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Հ. Իսակովի «Ծովակալ Իսակով» ֆրեգատը, ծովակալի ուսադիրի աստղ, նավագնացի դանակի վրա պատկերված նավը և խարիսխը: Վերին կենտրոնական մասում հուշադրամի թողարկման տարեթիվն է՝ «2019», իսկ ստորին մասում՝ անվանական արժեքը՝ «1000 դրամ»: Շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է:

Հուշադրամի դարձերեսին Հ. Իսակովի դիմապատկերն է, նավագնացի դանակի և գրքերի հատվածներ: Մակագրություններն են՝ «АДМИРАЛ И. С. ИСАКОВ», «ԾՈՎԱԿԱԼ Հ. Ս. ԻՍԱԿՈՎ», «125 ամյակ», «1894-1967»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Տրամագիծը	40,0 մմ
Քաշը	33,6 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ

էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Ծովակալ Իսակով-125» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի պատմության թանգարանի 100-ամյակ» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Հայաստանի պատմության թանգարանի ցուցադրանմուշ-ներից մի քանիսը: Կենտրոնական մասում անվանական արժեքի մակագրությունն է՝ «1000 ԴՐԱՄ DRAM», և թողարկման տարեթիվը՝ «2019»: Շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» և «CENTRAL BANK OF ARMENIA» մակագրություններն են:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Հայաստանի պատմության թանգարանի շենքից հատված, թանգարանի խորհրդանշանը և հայկական զարդանախշ: Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ», «THE 100TH ANNIVERSARY OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA», «100 ԱՄՅԱԿ»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Տրամագիծը	40,0 մմ
Քաշը	33,6 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ

էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Հայաստանի պատմության թանգարանի 100-ամյակ» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Կոմիտաս-150» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Կոմիտասի ճեպանկարներից և Կոմիտասի նոտագիր և խազագիր ստեղծագործությունը՝ «Ազգային օրհներգ»: Վերին մասում թողարկման տարեթիվն է՝ «2019», ստորին կենտրոնական մասում՝ անվանական արժեքի մակագրությունն է՝ «1000 դրամ»: Շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են Կոմիտասի հուշարձանից հատված (գործ՝ Ա. Հարությունյանի), արագիլ, նոտաներ, խազեր և երգահանի ձեռքերը: Աջ մասում Գևորգյան ճեմարանի ուրվագիծն է, Կոմիտասի ծննդյան և մահվան տարեթվերը՝ «1869» և «1935»: Մակագրություններն են՝ «ԿՈՄԻՏԱՍ», «KOMITAS» և «150»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Տրամագիծը	40,0 մմ
Քաշը	33,6 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ

Էսքիզների հեղինակներն են Վարդան Վարդանյանը (դիմերես) և Էդուարդ Կուրղինյանը (դարձերես):
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Կոմիտաս-150» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





(ՓԵՏՐՎԱՐ 2019)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ statistics@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 40

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների փոփոխություն

Գնաճ

Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 44

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ համախառն արտաքին պարտք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 59

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 60

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

